

Հ. ՅՈՎՍԷՓ ՄԱՐԻ ԺԱԳ



ՃԱՓՈՆԻ ՄԷՋ

ԿՈՒ ԼԱՅ

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՏԻՐԱՄԱՅՐԸ

Հայացուց՝ Հ. ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ՊԵՀԵՍՆԻԼԵԱՆ

Ս. ՂԱԶԱՐ - ՎԵՆԵՏԻԿ
2013

ՅԱՌԱՋԱԲԱՆ

1975-ին՝ մամուլով, ձայնասփիւռով եւ հեռատեսիլով, 115 միլիոն ճափոնցիներ տեղեկացան Ազիթայի Տիրամօր արձանին շուրջ պատահած արտասովոր երեւոյթներու մասին:

Յաջորդաբար շատեր, շատ անգամ, նոյն բաները կրկին տեսան տան հեռատեսիլէն անգամ:

Աստուածամօր արձանը մէկ մեթր բարձր փայտէ քանդակ մըն է, գետեղուած նոյնքան բարձր խաչելութեան մը առջեւ: Նման է Փարիզի Rue du Bac-ի հրաշագործ մետալին, ուր Սուրբ Կոյսը ներկայացուած է կանգուն, բոպիկ ոտքերով երկրագունտին վրայ կանգնած, թեւերը գրկաբաց ու դէպի վար երկարած:

Ամստերդամի «Ամենայն Ազգաց Տիրուհի»ին ընդօրինակութիւնն է, որու պատկերը Մայրապետները տուած էին

հեթանոս արձանագործի մը՝ փայտի վրայ քանդակելու համար:

Այս արձանին շուրջ պատահած երեւոյթները իրապէս զարմանալի եւ արտասովոր են՝ եւ կարելի չէ որեւէ բնական բացատրութիւն մը տալ անոնց:

Չենք ուզեր կանխել Եկեղեցւոյ վերջնական վճիռը, բայց կարելի չէ անոնց վրայ խօսիլ առանց «հրաշք» բառը գործածելու:

Ճշմարտապէս հրաշագործ արձան մըն է որ

- կ'արիւնոտի,
- կը քրտնի
- անոյշ բուրմունք կը սփռէ շուրջը
- կը դառնայ լուսափայլ
- կը խօսի
- կու լայ
- եւ այս բոլորին վրայ աւելցուցէք՝ որ մայրապետը որու կը խօսի Տիրամայրը՝ բացարձակօրէն խուլ է:

Արձանի մը շուրջ իրարու վրայ կուտակուած հրաշքներու շարք մը ունինք մեր առջեւ, որոնց անձամբ միամտաբար ներկայ ու ականատես գտնուեցանք: Եւ եթէ հոս այս իրողութիւնները կը ներկայացնեմ իբրեւ անտարակուսելի եւ առանց վերապահութեան ընդունելի, պատճառը այն է՝ որ տեղւոյն Առաջնոր-

դը, Գերապայծառ Յովհաննէս Իթոյ Շոյիրա, յետ իր անուանած Եկեղեցական - Յանձնախումբերուն կանոնական քննութեան աշխատանքներուն, եւ յետ իրողութիւնները Հռոմի գերագոյն իշխանութիւններուն ներկայացնելու (Փրանսերէնի թարգմանուած ստորագրեալէս), 22 Ապրիլ 1984-ին հովուական նամակով պատօնապէս յայտարարած է անոնց գերբնական բնոյթը, այսինքն՝ թէ արժանահաւատ են:

Բացի ասկէ՝ տասնըհինգ անգամէ աւելի ես անձամբ գացած եմ այս երեւումներու սրբաբոյր վայրը, ուր պահապան հրեշտակներու տեսիլքներ ալ տեղի ունեցեր են: Իսկ 1982ի Օգոստոսին, հրաւիրուած ինքնին Գերպծ. Յովհաննէս Իթոյ Եպիսկոպոսէն, տարեկան հոգեւոր կրթութիւն քարոզած եմ քոյրերու այդ փոքրիկ վանքին, որ կը կոչուի «Սուրբ Հաղորդութեան Աղախիններու հիմնարկ»:

Այս բոլորը կ'արձանագրեմ ըսելու համար ձեզի՝ որ հրաշալի առիթներ ընծայուեցան ինծի՝ աւելի լաւ ճանչնալու այդ հասարակութիւնը եւ մասնաւորապէս անոնց հոգեկան խոր ապրումները՝ ամբողջապէս կեդրոնացած Սուրբ Հաղորդութեան վրայ, ես ինքս ականատես վկայ մը դառնալով Տիրամօր գուրգուրանքներուն: Իրապէս ալ՝ մտածական աղօթքը, հասարակաց ժամերգութիւնը, պատարագէն յետոյ՝ Սուրբ Հաղորդութեան երկը-

պագուլթեան ժամերը, երկու հասարակաց ըստած վարդարանները եւ ուրիշ ջերմե-
ռանդուլթիւններ՝ բոլորն ալ կը կատա-
րուին «ի բազմոցի» ցուցադրուած Տա-
պանակի Յիսուսին առջեւ ամէն առաւօտ՝
գէթ մէկ ժամ տեւողուլթեամբ:

Օրուան մնացած ժամերը՝ նուիրուած են ուխտաւորներու ընդունելու-
լթեան, անոնց կերակուրները եւ գիշերե-
լու սենեակները պատրաստելու (եթէ մի
քանի օր պիտի մնան): Նուիրուած են նաեւ տան մաքրուլթեան, դաշտի մշակու-
լթեան, հիւանդներու այցելուլթեան, քրիս-
տոնէականի դասերուն եւ նաեւ շուկա-
յին...

Ագիթայի այս փոքրիկ վանքը՝
նման է լուռ փեթակի մը, բայց այնպիսի՝
փեթակի մը՝ որու եռանդուն, ժրաջան ու
խաղաղ մեղուններու կեանքը՝ ամէն բանով
կը պատկերացնէ Նազարէթի տունը:

ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՃԱՓՈՆԻ ՄԱՍԻՆ

Երկրին անունը կազմուած է չի-
նական երկու գիրերով՝ ՆԻՀՈՆ եւ ՆԻ-
ՓՈՆ, այսինքն «արեւու ծագումին երկի-
րը»: որով անոր ազգային դրօշակն ալ կը
կրէ գեղեցիկ կարմիր արեւ մը՝ անարատ
սպիտակ ու չքնաղ խորքի մը վրայ, որ

կը խորհրդանշեն, ոմանց համաձայն, Անարատ Յղացեալ Կոյսը եւ իր Որդին՝ Արդարութեան Արեւը...:

Ճափոնը կազմուած է չորս մեծ կղզիներէ եւ բազմաթիւ փոքր կղզիներէ: Ընդարձակ երկիր մը չէ, միայն 377.682 հազարամեթր քառակուսի, երկարութիւնը՝ շուրջ 3.000 եւ ամէնէն լայն մասը 100 հազարամեդր:

Բնակչութեան թիւը՝ 1984-ին շուրջ 120.000.000 էր. ունի նաեւ փոքրամասնութիւններ, կազմուած Գորէացիներէ, Չինացիներէ եւ ճերմակ ցեղէ մը, բնիկ տեղացի (շուրջ 10.000) կոչուած Այինու, հիսիսային մասին մէջ: Մայրաքաղաքը կը կոչուի Թոքիոյ, բնակուած 12.000.000 մարդոցմէ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ճափոնի քաղաքական պատմութիւնը շատ հին արմատներ ունի եւ շատ բարդ է:

660-ին Քրիստոսէ առաջ կը հիմնուի կայսրութիւնը ժիմմու թեննոյէն (որ գաւակը կը նկատուէր Ամաթերազու աստուածուհիին): Քրիստոսէ յետոյ 552-ին կ'ընդունին հնդկական պուտայականութիւնը: 7-րդ դարուն՝ երկրին անկախ ու բաժնուած պետութիւններու միջեւ՝ միութիւնը տեղի կ'ունենայ: 1191-ին Ջէն Պուտայականութիւնը կ'ընդունին եւ վերջապէս 1542-ին է որ Փորթուկալցիները

կը հասնին Թանեկաշիմա եւ Քրիստոնէտութիւնը կը սկսի արագօրէն ծաւալիլ:

1640-ին Ճափոնը կը փակէ իր դռները արեւմուտցիներու յարաբերութիւններուն եւ վաճառականութեան: 1867-ին գարկ կու տայ երկրին արդիացումին: Բայց 1894-ին կը նետուի նաեւ շարք մը պատերազմներու մէջ՝ ընդարձակելու համար իր սահմանները եւ տիրապետութիւնը, նախ չինացիներուն դէմ, ապա ռուսերուն: Կը գրաւէ Գորէան: Առաջին մեծ պատերազմին կը միանայ դաշնակիցներուն՝ Գերմանիոյ դէմ: 1937-ին դարձեալ Չինաստանի դէմ կը պատերազմի: 1940-ին կը դաշնակցի Գերմանիոյ հետ, եւ անոր կողքին կռուելով՝ 1941-ին կը տարածուի գրեթէ բոլոր Ասիոյ վրայ: Բայց ամերիկացիներուն Հիրոշիմայի հիւլէական ռումբը (6. 08.1945-ին) եւ մի քանի օր վերջ Նակասաքիինը (9. 08. 1945-ին) ծունկի կը բերէ Ճափոնը:

Անկէ ետք հարցերը բանակցութիւններով կը լուծուին ու աշխատասէր Ճափոնը իր ճարտարարուեստով աւելի լաւ ու առաջնակարգ տեղ կը գրաւէ աշխարհի վրայ՝ քան պատերազմներով: Այժմ (1984) Ամերիկայէն յետոյ, երկրորդ մեծագոյն տնտեսական զօրութիւնն է աշխարհիս:

ԿՐՕՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Նախահայրերու կրօնքը Շին-
թՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ էր (Նախնիքներու
հոգիներուն պաշտամունք մը, ուր կայսրը
աստուածներուն ներկայացուցիչ կը նկա-
տուէր եւ կը յարգուէր), որու վրայ կ'ա-
ւելնայ պաշտօնապէս՝ Պուտտայականութիւնը: 19-րդ դարուն Շինթոյականութիւ-
նը պետական կրօնքի հանգամանքն ալ
կ'առնէ ու միանգամայն հզօր կուսակցու-
թիւն մը կը կազմէ:

Քրիստոնեանրու թիւը սահմանա-
փակուած կը մնայ ու նոյնիսկ համեմա-
տաբար նուազած: Պատճառը գուցէ չա-
փազանց յարումն է իրենց հնամեայ ա-
ւանդութիւններուն՝ որոնցմով հպարտ կը
զգան ինքզինքնին, ինչպէս նաեւ կապո-
ւածութիւնը իրենց ասպետական ու մար-
տական հոգիին եւ ամէն բանէ աւելի՝
քրիստոնէական ճշմարտութիւններու գի-
տութեան պակասը:

Տեսանք վերը, Փորթուզալցիներուն
ժամանումը Ճափոն 1542-ին:

1549-ին Օգոստոս 15-ին, Աստուա-
ծամօր վերափոխման տօնին օրը, Սուրբ
Փրանկիսկոս Քսաւրեան, Յիսուսեան Մի-
աբանութեան անդամ, ոտք կը դնէ Ճա-
փոն ու կը սկսի հրաշագործ առաքելու-
թիւն մը: Կը գտնէ մեծ համակրանք ժո-
ղովուրդին կողմէ եւ լաւ ընդունելութիւն
իշխանութիւններէն: 50 առաջին տարի-
ներու ընթացքին, դարձերը կը բազմա-

պատկուհին բոլոր երկրին եւ ընկերային բոլոր խաւերուն մէջ: Այն ատեն աւելի քրիստոնեաներ կային քան 1984-ին:

1597-ին դարձերու հակազդեցութիւն մը ծայր կու տայ ու Նակասաքիի մէջ 26 քրիստոնեաներ կը խաչուին: Անոնք կ'ըլլան առաջին մարտիրոսները Ճափոնի, սրբադասուած 8.06.1862-ին Երանելի Պիոս Թ.էն:

Երեք տարի չանցած, հալածանքը կը խստանայ եւ 1610-ին, կառավարական հրովարտակ մը կը վտարէ երկրէն բոլոր օտար քարոզիչները:

1613-ին կը սկսի մեծ հալածանքը երբ կ'արգիլուի նոյնիսկ քրիստոնեայ դառնալ, եւ Ճափոնի եկեղեցին կու տայ հազարաւոր, մանաւանդ թէ՛ տասնեակ հազարներով մարտիրոսներ: 1637-ին Շիմապարայի քրիստոնեայ գիւղացիները կ'ապստամբին կառավարութեան կրօնական ճնշումին դէմ, բայց ի զուր, միայն նոր անթիւ զոհեր եւ մարտիրոսներ տալու համար:

Հարկ էր գրեթէ 200 տարի սպասել որ Ճափոնը քիչ մը բացուի նաեւ կրօնքի գեանի վրայու, 1844-ին, Հայր Ֆորգատկը վերսկսի առաքելութիւնը, կը դառնայ առաջին Եպիսկոպոսը այդ երկրին ու Մայիս 1-ին Ճափոնը կը նուիրէ Աստուածամօր Սուրբ Սրտին:

Այսպէս քարոզչութիւնը կամաց կամաց կը շարունակուի ու Հայր Փրթի-

ժան Նակագաքիի մէջ կը գտնէ խուճբ մը հին քրիստոնեաներ որ 200 տարիէ ի վեր եւ աւելի, հաւատարիմ մնացած էին Քրիստոսի, հոգ չէ թէ առանց քահանայի:

1870-ին, դարձեալ կը վերարժարծի նոր՝ 20 տարուան հալածանքի շրջան մը, որ վերջ կը գտնէ 1889-ին, Մէիժիի կայսրին հրովարտկով, որ կրօնքի ազատութիւն կը շնորհէր ամէնուն, ու ծայր կու տար Քրիստոսի հետեւորդներուն նոր եւ արագ աճումին:

Քիչ վերջ, 1891-ին, կը վերանորոգուի նուիրապետութիւնը եւ եկեղեցական կարգերը Լեւոն Քահանայապետին օրով ու, 1927-ին, Հռոմի մէջ կը ձեռնադրուի ճափոնացի առաջին Եպիսկոպոսը, յանձին ՀԱՅԱՍՏԱՔԱյի: Եւ որպէսզի քաղաքական իշխանութիւններու ազգամուկ ձգտումներէն ազատ մնայ եկեղեցին, բոլոր օտարազգի եպիսկոպոսները իրենց հրաժարականները կու տան, եւ անոնց տեղ ճափոնացի առաջնորդներ կ'ընտրուին ու կը ձեռնադրուին եւ, վերջապէս, կառավարութիւնը պաշտօնապէս կը ճանչնայ կաթողիկէ Եկեղեցին:

Ուստի 1945-ին վերստին կը յայտարարուի երկրին մէջ կրօնքի ազատութիւնը:

1960-ին Պետրոս Տոյի արքեպիսկոպոսը կը դառնայ առաջին Կարդինալը: Խորհրդարանին մէջ 491 անդամներու վրայ՝ 12-ը քրիստոնեաներէն ընտրուած

էին, եւ Մերակուտարանի 2,4%-ը դարձեալ քրիստոնեաներէ բաղկացած էր:

Ճափոնի կապերը Հռոմի եկեղեցիին հետ կը զօրանան 1981-ին, Երանելի Յովհանէնս-Պօղոս Բ. Պապին այցելութեամբ որ յատկապէս կ'աղօթէ Հիւրոշիմայի ու Նակասաքիի հիւլէական ռումբով գոհուածներուն յուշարձաններուն վրայ՝ կոչ ընելով խաղաղութեան ու մեծ համակրանք մը կը շահի ժողովուրդին մէջ:

Կալկաթայի Մայր Թերեզան ալ իր սիրոյ եւ սրբութեան պատգամը կը տանի Ճափոն՝ քրիստոնէական հարազատ ապրումի ուղին գծելով այդ ժրաջան ժողովուրդին որ, երբ դարձի գայ, ապահովաբար, հոգիներու փրկութեան անպատում նպաստ մը պիտի կարենայ ընծայել՝ բոլոր աշխարհի տարածութեան մէջ:

Ագիթայի սրբավայրին պատմութեան անցնելէ առաջ, տանք շատ համառօտ վիճակագրութիւն մը որ այսօրուանը չէ (2012-ին վերաբերեալ), այլ կատարուած է 1984-ին. բայց գաղափար մը կու տայ թէ ո՛րքան արագ քրիստոնէութիւնը կը յառաջադիմէ այդ երկրին մէջ:

Ճափոնի մէջ 1984-ին, 120 միլիոն բնակչութեան վրայ, 400.000-ը կաթողիկէ էին: Այսօր – 2012-ին, 128 միլիոնի վրայ կաթողիկէները 1.500.000 են:

Դարձեալ 1984-ին, 16 թեմեր կային, բոլորն ալ ճափոնացի առաջնորդներ-

րով, շուրջ 900 ճափոնացի քահանաներէ
օժանդակուած եւ մօտ 1000-ի չափ օտար
քարոզիչներէ:

6.000 ճափոնացի մայրապետներ կը
գործէին եւ կ'օգնէին կղերին, առաւել
700 օտար մայրապետներ: 1982-ին՝ 179
ճափոնացի չափահաս կղերիկոսներ կ'ու-
սանէին եկեղեցական դառնալու համար:
Ինչպէս կը տեսնէք, շատ մեծ է թիւը
կոչումներու:

Ճափոնի եկեղեցին, հակառակ իր
փոքրութեան, ճանչցուած ու գնահատու-
ած է նաեւ ժողովուրդի հեթանոս գան-
գուածներէն, որոնք գրաւուած քրիստո-
նէական կրօնքի վարդապետութենէն ու
գործունէութենէն, անհամար թիւով կը
հետեւին անոր ճայնասփիւռի եւ հեռա-
տեսիլի սփռումներուն:

ԱԳԻԹԱՅԻ ՏԻՐԱՄՕՐ ԱՐՁԱՆԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա.

ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՅՍԵՐ ԵՆ
ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ ԱՐԻԻՆՈՂ ՎԷՐՔԸ

Շատերու գրեթէ անծանօթ ճափոնի մասին՝ համառօտ տեղեկութիւններ տալէն յետոյ, հիմա ամփոփ ոճով պիտի պատմեմ արտակարգ երեւոյթները որ տեղի ունեցան Ագիթայի փոքրիկ վանքին մէջ: Կորսուած մենաստան մըն է լեբան մը կողքին թառած, հիւսիս-արեւմուտքը ամէնէն մեծ կղզիին (կոչուած Հոնչու), "Ճափոնի ծով"-ուն զիմաց, դէպի Մանջուրիան եւ դէպի մեծ ու սառն Սիպերիան նայող:

Շատ անգամ վերէն վար կտրած եմ այս դիւթիչ երկրին բոլոր կղզիները իմ առաքելութեանս 33 տարիներու ընթացքին: Այցելած եմ բազմաթիւ վանքեր հոգեւոր կրթութիւն քարոզելու կամ բանաստեղծութիւններ կատարելու համար կամ նոյնիսկ թարգմանիչի պաշտօնով, սկսեալ Հոգգայտոյէն (ճափոնի բոլորովին հիւսիսը գտնուող կղզիէն), մինչեւ Ֆորմո-

գայի մօտ երկարող Միագոյ կղզին, ուր 8 Դեկտեմբեր 1981ին հիմնուեցաւ 7-րդ Ճափոնի Թրափիստ ճգնաւորներու վանքը (արդէն 7 վանք 400.000 կաթողիկէ ժողովուրդի մը համար): Բայց պէտք է ըսեմ որ բնաւ չեմ տեսած այնքան աղքատ վանք՝ ո՛րքան Ագիթայինը, ձմեռը 4-5 ամիս թաղուած ձիւնի տակ, գրկուած քաղաքացիներու բոլոր հանգստաւէտութիւններէն, այնքան որ Հայր Եագուտան, մատրանապետը քոյրերուն, ստիպուեցաւ իր քահանայատունը ստեղծել հին հաւնոցին մէջ, թէպէտ մենաստանը հարուստ ըլլայ աւետարանական պարզութեամբ, բնական գեղեցիկ շրջապատով եւ ճոխ բուսականութեամբ:

Մայրապետը որու Սուրբ Կոյսը կը յանձնէ իր պատգամները, կը կոչուի Քոյր Ազնէս Սասակաուա Քաթսուքոյ: Վանք չմտած՝ Ժէթսու քաղաքին թաղամասերէն մէկուն քրիստոնէականի ուսուցիչն էր (կապուած Նիիկաթայի Թեմին՝ ենթակայ Իթոյ Եպիսկոպոսին՝որ միանգամայն հիմնադիրն էր այդ կրօնաւորական հաստատութեան):

Արտասովոր դէպքերը որպատահեցան Իւծավատայի մէջ (որ Ագիթայի կապուած գիւղին անունն է), սկսան 1973ին: 12 – 13 – 14 Յունիսին, այդ երեք օրերուն ընթացքին, Քոյր Ազնէս կը տեսնէ

լուսաշող ճառագայթներ որ Սուրբ Հաղորդութան տապանակէն կը ժայթքէին...

Ուրեմն՝ ամէն բան կը սկսի ու կը կատարուի տապանակին շուրջ: Շատ նշանակալից է այս: Կ'ապրինք այնպիսի՝ դարաշրջանի մը մէջ ուր գրեթէ բոլոր աշխարհի տապանակները միշտ աւելի լքուած կը մնան: Յիսուս երեսի վրայ ձգուած, մինակը՝ իր սիրոյ մեծ խորհուրդին մէջ: Ո՛րքան խղճալի... Եւ որովհետեւ չկան երկրպագուներեւ կայ գողերու վախը, եկեղեցները գոց կը պահուին, նման բանտերու... Սուրբ Հաղորդութեան այցելութիւնները խափանուած կամ շատ սահմանափակուած կը մնան, ուստի Տապանակը դարձեր է սառնարան մը ... ուր Յիսուս կը տառապի «իրեններուն» պաղութենէն եւ «բազմութեան» անտարբերութենէն:

Եւ ահաւասիկ ինքնին Աստուած տապանակին վրայ կը հրաւիրէ մեր ուշադրութիւնը որպէսզի, մարդիկ, վերջապէս, քիչ մ'աւելի իրմով զբաղին: Կը փափաքի ունենալ երկրպագուներ որ զինքը մխիթարեն՝ երբ մինակ թողուած է, որ իր վրայ մտածեն, որ զինքը ճշմարտապէս սիրեն՝ այնքան որ երջանիկ զգան ինքնզինքնին իր մօտ մնալու եւ ժամանակը՝ միայն իրեն համար սպառելու:

Կիրակի, 24 Յունիսին, Սուրբ Հաղողութեան տօնին օրը, լուսաշող ճառագայթները դեռ ակելի պայծառ լոյս մը կ'արձակէին...

28 Յունիսին, Յիսուսի Սուրբ Սրտին տօնին նախօրեակին, խաչի ձեւով վէրք մը, 3 հարիւրորդամեղը երկար եւ 2 հար. լայն, կը ձեւանայ Քոյր Ագնէսի ձախ ափին մէջ որ իրեն շատ սուր ցաւ մը կը պատճառէ: Այս երեւոյթը կը կրկնուի ամէն շաբաթ:

Գերապայծառ Իթոյ, որ իր աչքերով տեսած եւ հետեւած է եղելութիւններուն, չի գտներ որեւէ բնական բացատրութիւն եւ հետեւեալ մանրամասնութիւնները կու տայ մեզի:

«Հինգշաբթի երեկոյ, վէրքը դեռ չոր է, բայց կը սկսի ուռիլ՝ ճեղքուածքներ բանալով մորթին վրայ»:

«Ուրբաթ առաւօտ արիւնը կը սկսի հոսիլ, կարմիր ակօսներ թողլով դարմանումի լաթերուն վրայ»:

«Շաբաթ առտու, արիւնը կը դադրի վագելէ, թողլով նորապէս չորցած վէրք մը»:

«Այս երեւոյթները կը շարունակուին գրեթէ բոլոր Յունիսի ընթացքին, շատ մեծ ցաւ պատճառելով քրոջ որ կ'ըսէր, թէ՝ "փայտ ծակելու գայլիկոնի կը նմանի որ ձեռքս կը խոցէ":

Այս բոլորը, անշուշտ, աստուածային հրակէր մըն էր ապաշխարելու եւ

մեղքերու քառութեան ճամբան բռնելու՝ ուշ չեղած: Ատով է որ Փրկիչը կրնար մխիթարուիլ:

29 Յունիսին, որ ուրբաթ օր մըն էր, Տօն Յիսուսի Սուրբ Սրտին, հրեշտակներ կ'երեւնան խորանին շուրջ սրբասացութեան երգը հնչեցնելով. "Սուրբ, սուրբ, սուրբ, տիեզերքի Տիրոջ, լի են երկինք ու երկիր քու փառքովդ"....

5 Յուլիսին, Քոյր Ազնէսի ափին վէրքի ցաւերը չափազանց սաստկանալով, իր ընկերուհիները խորհուրդ կու տան որ քիչ մը երթայ հանգչելու: Սակայն ի գուր: Ան կ'ուզէ մնալ իր պարտականութեան վրայ: Տառապանքը արգելք չ'ըլլար շարունակելու աշխատանքը եւ հոգ տանելու մատրան, որովհետեւ ինքն էր ժամկոչը:

Տապանակին շուրջ պատահած հրաշատեսիլ երեւոյթներէն յետոյ, Քոյր Ազնէսի սիրտը շարունակ կը թռչէր Սուրբ Հաղորդութեան Յիսուսին մօտ եւ իր իղձերը սիրոյ կրակով բռնկած, բնականաբար կ'առաջնորդէին իր քայլերը իր Միրելիին մօտ, ուր իր հոգին կը հալէր ու կը միանար իր Փրկչին:

Ուրբաթ, 6 Յուլիս 1973-ին, առաւօտեան ժամը 3-ի ատենները, կին մը կ'երեւնայ իրեն եւ կ'ըսէ.

«Մի՛ վախնար, ես քու մօտդ կեցողն եմ, որ քեզ կը պաշտպանեմ: Եկուր ետեւէս, հետեւէ ինձի»: Մայրապետը կը

կարծէր իր տարեց քրոջ հետ հաղորդակ-
ցութիւն ունենալ, որ քիչ ժամանակ ա-
ռաջ վախճանած էր՝ յետ մկրտութեան
շնորհքը ընդունելու: Աւելի ուշ պիտի
հասկնայ, որ իր պահապան հրեշտակը՝
պարգապէս իր քրոջ կերպարանքը առած
էր, աստուածային փափկանկատութեամբ
ցոյց տալու համար իրեն որ ան, մեռնե-
լէն առաջ ստացած կնունքով, արդէն եր-
կինք կը գտնուէր:

Պահապան հրեշտակն է, ուստի, որ
կը շարունակէ խօսիլ Քոյր Ազնէսին.
«Մի՛ վախնար, այլ աղօթէ՛ ոչ միայն քու
մեղքերուդ համար, այլ նաեւ հատուցում
ընելու բոլոր մարդոց մեծամեծ յան-
ցանքներուն փոխարէն: Ներկայ աշխարհը
կը վիրաւորէ Յիսուսի ամենասուրբ Սիր-
տը իր ապերախտութեամբ եւ նախա-
տինքներով: Ամենասուրբ Կոյսին ձեռքին
վէրքը՝ աւելի խոր է քան քուկդ: Հիմա
երթանք միասին մատուռ ...»:

Քոյր Ազնէս կ'իմանայ այսպէս որ
Սուրբ Կոյսին ափին մէջ ալ վէրք մը
բացուած էր, աւելի խոր քան իրը: Ար-
դեօք Յիսուսի Մայրը, մասնակից մեր
փրկագործութեան, զի՞նքն ալ կ'ուզէր
նոյն նպատակին նուիրուած՝ գործակից
մը դարձնել:

Երկիւղով լի, կը հետեւի հրեշտա-
կին, քայլելով երկար եւ նեղ սրահներու
մէջէն որ մատուռ կ'առաջնորդէին: Հոն
հասնելուն պէս՝ հրեշտակը կ'աներեւու-

Թանայ: Քոյր Ազնէս նախ կ'ամփոփուի խոր երկրպագուԹեամբ տապանակին առջեւ, վերջը կ'ուղղուի Սուրբ Կոյս Մարիամի արձանին կողմը՝ խորանին անկիւնը աջին, ստուգելու անոր ձեռքի վէրքին վիճակը: Հագիւ կը մօտենայ, անոյշ եւ խոհրդաւոր ձայն մը կը հասնի իրեն, փայտէ արձանիկին կողմէն: Չարմացած, Քոյր Ազնէս կ'իյնայ ծունկի ու կ'երկրպագէ՝ գետինը համբուրելով ու կը մնայ այդ վիճակին մէջ՝ չկարենալով գլուխն անգամ վեր բարձրացնել: Հրաշալի երկնային ձայն մը քաղցր ներդաշնակուԹեամբ՝ կը հնչէր իր ԽՈՒՂ ականջներուն: Այդ պահուն է որ Քոյր Ազնէս կը ստանայ առաջին պատգամը:

Բ.

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Երկնային ամենագուլթ Մայրն էր որ մտերմաբար իր աղջկան կ'ուղղէր իր խօսքը: Մօր մը սիրտն էր որ կը խօսէր, որ կը տառապէր իր աղջկան տառապանքով՝ ուզելով գինքը մխիթարել եւ քաջալերել եւ չէր կրնար թողուլ որ իր գաւա-կը մինակը տանջուի:

«Աղջիկս, իմ նորընծայ գաւակս, շատ լաւ ըրիր հնազանդելով ինծի եւ ամէն բանէ անջատուելով. (թողած էր ամէն բան ու մտած վանք): Խլութեան հիւ-լանդուլթիւնը արդեօք, կը տառապեցնէ՞ քեզ: Ապահով եղիր, պիտի առողջանաս:

«Համբերէ: Աստուած անով քեզ կը փորձէ: Զեռքիդ վէրքը շատ կը ցաւի՞»:

Ու այս ըսելով Քոյր Ագնէսի ու-շադրութիւնը կը կեդրոնացնէ արձանին ասիւն խոր վէրքին վրայ, ուստի՝ նաեւ կրած ցաւին վրայ:

«Աղօթէ՛ ու նուիրէ ամէն բան մարդոց մեղքերուն քաւութեան համար: Բոլոր աղջիկներս որ հոս են, մէկիկ մէկիկ առնուած, թանկագին են ինծի հա-մար ինչպէս աչքիս բիրբերը»:

Որքան անոյշ ու մխիթարական խօսքեր՝ բոլոր այդ հասարակութեան քոյրերուն համար: Աստուածամայրը կը շարունակէ խօսիլ՝

«Բոլոր սրտովդ կ'ըսե՞ս «Սուրբ Հաղորդութեան աղախիններու» աղօթքը: Եթէ կ'ուզես միասին ըսենք»:

Ի՛նչ զարմանալի: Ահա՛ Մայր մը՝ Մարիամ եւ իր դուստրը՝ որ միասին կ'աղօթեն Սուրբ Հաղորդութեան ուղղուած աղօթք մը, լի վառ սիրով, յորինուած հիմնադիր Եպիսկոպոսէն... ցոյց տալով թէ ո՛րքան հաճոյ է իրեն տապանակի Յիսուսին պաշտամունքը:

«Շատ աղօթէ Քահանայապետին, Եպիսկոպոսներուն, քահանաներուն համար: Քու մկրտութենէդ ի վեր շատ աղօթեցիր իրենց համար: Այո՛, շատ աղօթեցիր, առանց բնաւ մոռնալու՝ յարատեւեցիր: Ասկէ յետոյ ալ շարունակէ եւ դեռ աւելի շատ աղօթէ:

«Խօսէ՛ եւ յայտնէ՛ այսօրուան ըսածներս մեծաւորիդ եւ ըրէ՛ ինչ որ քեզի կը հրամայէ: Ան այս վայրկեանիս կը փափաքի որ եռանդով աղօթես»:

Վերջին խօքերը ցոյց կու տան թէ նոյնիսկ երկնքէն եկած յայտնութիւնները պէտք է միշտ Եկեղեցւոյ իշխանութեան ենթարկուին:

Տիրամօր այս առաջին պատգամը կը հայէր գլխաւորաբար Քոյր Ագնէսի անձին:

Միեւնոյն օրը (6 Յուլիս 1973), ինչպէս որ պահապան հրեշտակը աւետած էր իրեն, խաչաձեւ վէրք մը, բոլորովին նման Քոյր Ազնէսին ունեցածին, երեւցաւ նաեւ Սուրբ Կոյսին արձանին աջ ափին մէջ եւ սկսաւ արիւնոտիլ:

25 Յուլիսին, Գերպ. Իթոն կ'երթայ քոյրերու վանքը: Անձամբ կը քննէ ու կը ստուգէ որ Տիրամօր արձանին վէրքը՝ բոլորովին նման էր քոյր Ազնէսի խոցին: Յաջորդ օրը, 26 Յուլիս 1973, Սրբուհի Աննայի տօնին, Աստուածամօր ձեռքը նորէն կ'արիւնի, բայց այս անգամ դեռ աւելի առատ եւ աւելի մուլթ գոյնի կայլակներով: Խոր ցաւ մը կ'երեւնար հոն եւ տեսնելն անգամ՝ իրապէս անտանելի տառապանք մը կը ստեղծէր ներկաներուն հոգիին մէջ... Այդ օրը Քոյր Ազնէս շատ աւելի ցաւատանջ խոցոտումներ կը զգայ իր ափին մէջ, բայց այնքան սուր՝ որ վերէն վար քրտինքով կը թրջի: Յաւը երթալով այնքան սուր կը դառնայ որ անտանելի հանգամանք մը կ'առնէ:

Յաջորդ օրը, ուրբաթ, 27 Յուլիս, հրեշտակը իրեն կ'ըսէ.

«Քու ցաւերդ այսօր պիտի վերջանան: Պահէ գանձի պէս Մարիամի արեան յիշատակը եւ քանդակէ գայն սրտիդ մէջ, որովհետեւ կարեւոր նշանակութիւն մ'ունի Տիրամօր արեան հեղումը:

«Ան թափեց իր արիւնը

- ընդունելու համար Աստուծոյ ձեր դարձի շնորհքը.
- խնդրելու իր Որդիէն խաղաղութիւնը.
- հատուցանելու համար այն բոլոր նախատինքներուն եւ ապերախտութիւններուն փոխարէն, որ Աստուծոյ դէմ կը կատարուին:

Յիսուսի Սուրբ Սրտին ջերմեռանդութեան հետ, ունեցիր նաեւ իր թանկագին արեան պաշտամունքը:

Շատ աղօթէ բոլոր մարդոց մեղքերուն քաւութեան համար»:

Ուրեմն Աստուածամայրը թախանձագին կը խնդրէ մեզմէ որ անբաժան կերպով ունենանք Յիսուսի Սուրբ Սրտին հետ՝ նաեւ իր Սուրբ Արեան ջերմեռանդութիւնը: Մեղաւորներուն հանդէպ ունեցած իր Սրտին այրող սէրն է որ մղեց զինքը թափելու խաչին վրայ՝ մինչեւ իր արեան վերջին կաթիլը, անոնց փրկութեան եւ սրբութեան համար:

Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԳԱՄԸ

3 Օգոստոս 1973-ի առաջին Ուրբաթ օրը՝ Տիրամայրը Քոյր Ագնէսին տուաւ երկրորդ պատգամը:

Կը պարունակէր պատասխանը ճշգրիտ հարցումներուն որ Հիմնադիր Եպիսկոպոսը խնդրած էր տեսանող մայրապետէն որ ուղղէ Սուրբ Կոյսին՝ յաջորդ երկնաւոր այցելութեան. յատկապէս՝ աթէ արդեօք կը փափաքի՞ որ Սուրբ Հաղորդութեան Աղախիններու հաստատութիւնը գոյատեւէ: Բ. եթէ կը փափաքի՞ որ ներկայ ձեւով շարունակէ ան: Գ. հայեցողական կեանքը հարկաւո՞ր է, արդեօք, նոյնիսկ աշխարհական բարեպաշտ ընկերակցութեան որ ինք հիմնած էր:

Այս երկրորդ պատգամը կը պարունակէր նախ անձնական ուսուցում մը՝ ուղղուած երիտասարդ նորընծայ Ագնէսին, զինքը իր ժամանակաւոր ուխտերուն պատրաստելու համար եւ, առաջին անգամ ըլլալով, մաս մըն ալ ուղղուած հասարակութեան:

Կէսօրէն յետոյ, ժամը երկուքի տենները, Քոյր Ագնէս իր վարդարանը ը-

սելու վրայ էր իր պահապան հրեշտակին հետ, երբ խորհրդաւոր ձայնը, գեղեցիկ ու հրաշալի ու աննկարագրելի, որ լսած էր նախորդ անգամին, կրկին կու գայ Սուրբ Կոյսին արձանէն:

«Աղջիկս, իմ նորընծայուհիս, կը սիրե՞ս մեր Տէրը: Եթէ կը սիրես, լաւ մտիկ ըրէ ինծի: Ինչ որ պիտի ըսեմ՝ կարելոր բան մըն է եւ դուն պիտի հաղորդես Մեծաւորիդ:

«Շատ մարդիկ աշխարհիս վրայ կը վշտացնեն մեր Տէրը: Կը փափաքիմ գտնել անձեր որ ուզեն զինքը մխիթարել: Ես եւ Որդիս՝ հոգիներ կ'ուզենք որ իրենց տառապանքներով եւ աղքատութեամբ ուզեն հատուցում ընել, մեղաւորներուն եւ ապերախտներուն պատճառած վիշտերուն փոխարէն, որպէսզի Երկնաւոր Հօր բարկութիւնը իջեցնենք:

«Հասկցնելու համար թէ ո՛րքան գայրացած է աշխարհի, Հայրը կը պատրաստուի թողլու որ մեծ պատիժ մը գայ բոլոր մարդկութեան վրայ:

«Շատ անգամ իմ Որդւոյս հետ միացած, ջանացի մեղմել Հօր գայրոյթը: Կրցայ կեցնել այս բարկութիւր իր Որդւոյն խաչի չարչարանքներով, ցոյց տալով անոր արիւնը եւ իրեն նուիրելով սիրոյ զոհերու բազմութիւնը, անոնց, որ իրապէս շատ կը սիրեն զինքը եւ կը մխիթարեն:

«Աղօթքը, մահացուցումը, աղքատութիւնը, առաքինութեան գործերը որ գոհողութիւն եւ քաջութիւն կը պահանջեն, կրնան մեղմացնել Հօր գայրոյթը: Այս բոլորը քու հասարակութենէդ ալ կ'ուզեմ:

«Պատուէ աղքատութիւնը: Աղքատութեան մէջ մնալով, դարձի եկուր ((որովհետեւ ընչաքաղցութիւնը աղբիւր է ամէն տեսակ չարիքի եւ ախտի)):

«Աղօթէ ու մարդոց բազմութեան ապերախտութիւններուն եւ նախատինքներուն փոխարէն՝ ապաշխարէ:

«Բոլոր սրտով արտասանէ Սուրբ Հաղորդութեան Աղախիններու աղօթքը եւ գործադրէ՝ ըստածները՝ նուիրելով մարդոց փրկութեան համար: Իւրաքանչիւր ոք թող ջանայ իր պաշտօնին համաձայն եւ կրցածին չափ՝ Աստուծոյ նուիրելու ինքզինքը եւ ինչ որ ունի:

«Նոյնիսկ աշխարհական բարեպաշտ ընկերակցութեան մը մէջ՝ աղօթքը եւ հայեցողութիւնը անհրաժեշտ են: Հոս հաւաքուած անձերը՝ աղօթել ուզող հոգիներ են: Առանց շատ արտաքին ձեւին վրայ կեդրոնանալու, յարատեւաբար եռանդով աղօթեցէք ձեր Տէրը մխիթարելու համար:

«Ճշմարիտ է սրտիդ մէջ մտածածդ. պատրա՞ստ ես դուն, սիրելի նորընծաս, «մերժուած քար» մը դառնալու, ու նաեւ մեր Տիրոջ հարսը դառնալու:

Որպէսզի հարսը արժանի ըլլայ իր Փեսային՝ ուխտերդ կատարէ երեք գամերով խաչուելու դիտաւրութեամբ: Երեք գամերն են՝ աղքատութիւնը, ողջախոհութիւնը եւ հնազանդութիւնը: Այդ երեքին մէջէն՝ հնազանդութիւնն է հիմնականը:

«Ամբողջական ենթարկումով, հնազանդէ քու մեծաւորիդ: Բարեացակամ պիտի ըլլայ քեզի հանդէպ ու ըմբռնող կացութեան եւ քեզ պիտի առաջնորդէ»:

Այս է պարունակութիւնը երկրորդ պատգամին:

Նկատելի է եւ գարմանալի՝ տեսնել թէ ինչպէս Աստուածամայրը իր յանձնարարութիւններուն մէջ կը պնդէ աղքատութեան վրայ, արդէն ա՛յնքան աղքատ վանքի մը մէջ: Ինչ դաս մեզի: Ուրեմն հարստութեան ծարաւը, նիւթական բարիքներու ետեւէն վազելը, հանգստասիրութիւնը, շռայլութիւնը, կատաղութիւնը անկարգ կիրքերու գոհացում տալու, եւ մասնաւորապէս մարմնաւոր նուաստացուցիչ ցանկութիւնները, քաջալերուած մեր այս ժամանակներուն ազատական ու սպառումի մղող ընկերութենէն, ամենամեծ արգելքներն են դարձի գալու եւ Աստուած գտնելու:

Երկրորդ նկատելի իրողութիւնը՝ Քոյր Ազնէսի ամէնքէն կրելիք հալածանքն էր, բացի իր հասարակութենէն, որ միշտ իրեն նեցուկ պիտի կանգնէր:

Իրապէս տեսանողուհին «մերժուած քարի» պիտի նմանէր, անխնայ ենթարկուելով առաջին հետազօտութեան յանձնախումբին անարդար դատաստաններուն ու ամէն տեսակ հակառակութիւններուն եւ զրպարտութիւններուն, առանց ոեւէ բարեացակամութեան, նպատակ ունենալով՝ ոչ թէ ստուգումը՝ երեւոյթներուն երկնային նկարագրին, այլ անոնց մերժումը՝ ի յառաջագունէ: Եւ այդ յանձնախումբին սուտ զեկուցումներու հետեւանքով Քոյր Ազնէս եւ մայրաապետները՝ իբր «հիւանդ գլուխներ» դատուեցան եկեղեցական ու կրօնաւորական կարծիքին առջեւ:

Շատեր խնդրեցին ինծմէ թարգմանութիւնը «Յիսուսի Ս. Սրտին» աղօթքին, (կոչուած՝ Սուրբ Հաղորդութեան աղախիններու աղօթք) որ ա՛յնքան սիրելի է Սուրբ Կոյսին: Ահաւասիկ.

ԱՂՕԹՔ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍԻ ՍՈՒՐԲ ՍՐՏԻՆ

Ով շատ սիրելի Սուրբ Սիրտ Յիսուսի,
Իրապէս ներկայ սուրբ Աշխարհն մէջ,
Իմ սիրտս կը միանայ տապանակին մէջ
բաբախող քու Սրտիդ:
Ով Յիսուս, որ ամէն վաչրկեան ինքզինքդ
կը գոհես աշխարհիս բոլոր խորաններուն

վրայ փառաբանելով Հայրը եւ թախան-
ձելով գալուստը Իր թագաւորութեան,
Քեզի կը յանձնեմ ու կը նուիրեմ ամբող-
ջապէս ու ցմիշտ, իմ հոգիս եւ իմ մար-
մինս:

Հաճէ ընդունիլ սիրայօժար խոնարհ իմ
անձիս ընծան, եւ տրամադրել ուզածիդ
պէս Հօր փառքին եւ հոգիներու փրկու-
թեան համար:

Ով երանելի Մայր Աստուծոյ, թոյլ մի
տար որ հեռանամ Քու աստուածային
Որդիէդ: Պահէ զիս անվտանգ հովանիիդ
տակ իբրեւ քեզի պատկանող սեփական-
ութիւն: Ամէն:

Օրհնեալ ըլլայ Յիսուսի Սուրբ Սիրտը,
ճշմարտապէս ներկայ ամենասուրբ Հա-
ղորդութեան Խրհուրդին մէջ խորանին
վրայ. այժմ եւ միշտ՝ եւ յաիտեանս յա-
ւիտենից. ամէն:

Դ.

ՏԻՐԱՄԱՅՐԸ ԿԸ ՔՐՏՆԻ

Շաբաթ օր, 29 Սեպտեմբեր 1973-ին, փառաւորեալ Սուրբ Միքայէլ հրեշտակապետին – Ճափոնի Պաշտպան Սուրբին – տօնին, Սուրբ Կոյսին արձանին հրաշքները բազմապատկուեցան:

Մինչ կէսօրուայ ճաշէն ետք Քոյր Ազնէս, ուրիշ քրոջ մը հետ, վարդարանով կ'աղօթէր, արձանը փայլեցաւ լուսաւոր շողերով, բոցավառելով Սուրբ Կոյսին դէմքը բոլորովին սպիտակ լոյսով մը:

Վարդարանը վերջանալուն, Քոյր Ազնէս անդրադարձաւ որ արձանին ձեռքի վէրքը բոլորովին անհետացած էր եւ, դե'ռ աւելի զարմանալի, վերագտած էր երեք ամիս առաջ ունեցած կատարելութիւնը:

Քոյր Ազնէսին ձեռքին վէրքը, արիւնահոսութիւնը եւ ցաւերն ալ, շուրջ մէկ ամիս տեւելէ ետք, յանկարծ աներեւութացած էին: Սուրբ Կոյսին ձեռքի վէրքի նշանը՝ տեւած էր երեք ամիս, կարծէք ըսել ուզէր՝ որ պէտք չէ այնքան շուտ մոռնալ Տիրամօր Անարատ Սրտին խոցն ու ցաւերը եւ, մասնաւորապէս, այն

բաները (մեղքերը), որ պատճառ եղած էին անոնց:

Դարձեալ Սուրբ Միքայէլ հրեշտակապետին տօնին օրը, երբ երեկոյեան ժամերգութիւնը վերջանալու վրայ էր, բոլոր միւս քոյրերու ներկայութեան, վերանորոգուեցան առաւօտեան երեկոյթները՝ կրկին Տիրամօր արձանը սկսաւ փայլիլ, ողողուելով սպիտակ անհամեմատ լոյսով մը...:

Բայց նորօրինակ երեկոյթ մըն ալ աւելցաւ վրան: Հեղուկ մը, որ «քրտինք»ի կը նմանէր, սկսաւ հոսիլ արձանէն: Պահապան Հրեշտակը որ Քոյր Ազնէսի կողքին երեւցաւ, ըսաւ իրեն.

«Սուրբ Կոյսը աւելի տխուր է հիմա՝ քան երբ արիւն կը թափէր. կ'ուզե՞ս չորցնել իր քրտինքը»:

Այն ատեն Քոյր Ազնէս եւ ուրիշ չորս քոյրեր, գացին ծծող նոր բամպակներ բերելու, չորցնելու համար քրտինքը՝ որ ամէն կողմէն կը կաթկթէր: Բայց ի՛նչ անակնկալ... Ո՛րքան ալ փորձէին չորցնել, քրտինքը կը շարունակէր առատօրէն հոսիլ, մէկ կաթիլը միւսին ետեւէն ... Քրտինքի կաթիլները կը հոսէին, իւզոտ ու թանձր, առանց կենալու, մասնաւորապէս ճակատէն ու վիզէն, այլ նաեւ ուսերէն, կուրծքէն, վերջապէս բոլոր արձանէն... Բամպակը եւ սրբիչ լաթերը՝ բոլորովին թաթախուեցան:

Խեղճ քոյրերը տխրած, իւրաքանչիւրը ինքնիր վրայ կ'առնէր յանցանքը Տիրամօր վիշտ պատճառած ըլլալուն եւ, շարունակելով սրբել քրտինքը, ա'յսպէս կ'աղօթէին.

«Սուրբ Կոյս Մարիամ, ներէ'... Կը ցաւինք քեզի այնքան վիշտ պատճառելնուս համար... Ներէ' մեր մեղքերուն եւ անհաւատարմութիւններուն... Գթա' ու խնայէ' քու անհաւատարիմ ու ապերախտ զաւակներուդ... Պաշտպանէ' մեզ, օգնէ' մեզի, կ'աղաչենք ու կը պաղատինք...»:

Ա'յսպէս աղօթելով, կը շարունակէին բոլոր սրտով չորցնել ցաւատանջ արձանը: Ինքը՝ Քոյր Ագնէս պիտի ըսէ աւելի ուշ. «Բամպակը որ ձեռքերուս մէջ ունէի, ա'յնքան խոնաւցած էր որ կրնայինք քամել»:

Ընթրիքէն յետոյ, երբ Քոյր Ագնէս գնաց կրկին մատուռ, արձանը դարձեալ բոլորովին թրջած գտաւ եւ քրտինքով թաթաւուն: Խեղճ քոյրերուն սրտերը ցաւով ճմլուած էին՝ ինչպէս, վստահ, ինքնին Յաւագին Տիրամօր Սիրտը: Անմիջապէս վերստին լծուեցան աշխատանքի՝ ցամքեցելու քրտինքը, բարձր ձայնով աղօթելով ու ներողութիւն խնդրելով Սուրբ Կոյսէն եւ իր գթութիւնը հայցելով այն բոլոր վիշտերուն եւ անսահման ցաւերուն համար որ մարդիկ իրենց անթիւ մեղքերով կը պատճառէին իրեն:

Բայց քրտինքը կրկին ու կրկին կը բխէր անդադար, եւ Աստուծոյ Մայրը կը թուէր մնալ անմխիթար:

Հագիւ արձանը, ինչպէս նաեւ քրտինքէն թրջած բամպակները քիչ մը չորնային, այնպիսի՝ անբացատրելի անոյշ բոյր մը կ'արձակէին, որ կը մօտենար վարդի կամ շուշանի կամ մանիշակի կամ բոլոր անոնց խառնուրդի մը բուրումին: Անհունօրէն նուրբ բուրում մը, որ աշխարհիս վրայ չի գտնուիր, լեցուցած էր բոլոր մատուռը:

Իրապէս յուզիչ է տեսնել թէ ինչպէս Սուրբ Կոյս Մարիամը, իբրեւ սիրալիր ու բարեգուլթ Մայր մը, ուզած է այս բոլոր կարեկից ու ցաւակցութեամբ լի ճափոնացի «Վերոնիքա»ներուն յայտնել ու ցոյց տալ, թէ ո՛րքան կը գնահատէր եւ կը հաճէր այն բոլոր մխիթարութիւններուն որ կը ջանային մատուցանել իրենց նուիրումով, քաւութեան արցունքներով, վառ պաղատանքներով եւ սրտերնէն բխած սլաքական աղօթքներով, որոնք ցոյց կու տային իրենց խոր սէրը, զղջումը եւ խոնարհութեան զգացումները:

Բայց Տիրոջ Մայրիկին փափկանկատութիւնը գերազանցեց քոյրերու որդիական ցոյցերը:

Ե.

ՏԻՐԱՄՕՐ ԲՈՒՐՄՈՒՆՔՆԵՐԸ

Յաջորդ առաջուտ, Կիրակի 30 Սեպտեմբեր 1973, բոլոր քոյրերը դարձեալ մատուռ մտնելուն, անակնկալի եկան: Անբացատրելի նոր անոյշ բուրում մը, որ Սուրբ Կոյսին արձանէն կու գար, ողողած էր բոլորմ մթնոլորտը:

- Քոյր Ազնէս կը պատմէ.

«Ոչ մէկ աշխարհի հոտանոյշ կարելի չէ համեմատել անոր: Երկնային բուրում մըն էր: Փոխանակ նախորդ օրուան տրտմութեան, քոյրերու դէմքերը ամբողջապէս պայծառացան ուրախութեամբ եւ արտակարգ խաղաղութեամբ մը՝ որ բոլորովին կը հակասէր նախորդ օրուան արցունքներուն եւ վիշտերուն: Հետեւանքն էր այս բոյրին որ ուղղակի ողողած էր ամբողջապէս բոլոր մատուռը»:

Այս երկնքէն իջնող բոյրը՝ շարունակեց բուրումնաւետել Հոկտեմբերի բոլոր առաջին 15 օրերը, որ նուիրուած էին Վարդարանի Տիրամօր: Պէտք է, սակայն, նկատի առնել որ 3 Հոկտեմբերին, Յիսուս Մանկան Սրբոուհի Թերեզային,

այս «Փոքրիկ Ծաղիկին» տօնին, ինչպէս նաեւ 15 Հոկտեմբերին, Աւիլացի Մեծն Թերեգայի տօնին, այս բոլորը որ երկնքէն իջած վարդերու անուշահոտութեան կը նմանէր, դեռ աելի սաստկացաւ: Այս երկու Թերեգաներն ալ իրաւունք ունեցան յատուկ առանձնաշնորհումի:

Նկատի առնելու է նաեւ 7 Հոկտեմբերը: Սուրբ վարդարանի տօնին օրը՝ երկինքը հաճեցաւ յայտնել իր նախասիրութիւնը այս ջերմեռանդութեան հանդէպ եւ անոր որ Թագուհին է Վարդարանին. նախասիրութիւն նաեւ բոլոր անոնց որ սիրահարներ են այս ջերմեռանդութեան: Առաւօտէն ի վեր, եւ նաեւ բոլոր օրուան ընթացքին, մատուռը ողողուեցաւ հրաշալի, ու նոյնքան ալ խորհրդաւոր այս բոլորով:

Բայց ձգենք որ Քոյր Ագնէս խօսի.

«7 Հոկտեմբերին, քանի որ սուրբ վարդարանի տօնն էր, յատուկ եռանդով մը կ'աղօթէի ամէն հատիկի մէջ դնելով բոլոր սիրտս: Այն օրը հոտաւէտ բոլորը ա'յնքան լեցուցած էր մատուռը որ, կերպով մը, ինքզինքս շրջապատուած կը զգայի Սուրբ Կոյսին գորովով եւ գինովցած Յիսուսի սիրով:

Ճիշտ այն վայրկեանին երբ ես ինծի կը հարցնէի թէ ո'րքան ժամանակ պիտի տեւէ այս անոյշ հոտը, յուսալով միանգամայն որ բոլոր վարդարանի ամի-

սը շարունակէ, Պահապան Հրեշտակս երեւցաւ եւ գլուխը շարժելով ըսաւ ժպտադէմ՝ «Պիտի մնայ մինչեւ 15 Հոկտեմբեր: Բնաւ այլեւս պիտի չզգաք նման բուրում մը աշխարհիս վրայ: Պէտք է որ այս բոյրին նման դառնաք առաքիլնի: Եթէ ջանաք ա՛յնպէս ըլլալ, պիտի հասնիք կատարելութեան՝ մնալով Սուրբ Կոյս Մարիամի պաշտպանութեան տակ»: Այս ըսելէն վերջը՝ հրեշտակը աներեւութացաւ»:

Ինչպէս որ հրեշտակը կանուխէն ըսած էր, 1973-ի Հոկտեմբեր 16-ին, խորհրդաւոր բուրումը, որ բոլոր մատուռը կը բուրումնաւետէր, մեծ Սուրբ Միքայէլ հրեշտակապետին տօնէն ի վեր, յանկարծ չքացաւ: Ամէն ոք մնաց զարմացած, քանի որ սովորական ու հասարակ հոտերէն բոլորովին տարբեր էր, երկինքէն իջած բան մըն էր:

Աստուածածին Մայրիկը, մխիթարիչը վշտաբեկներուն, իր մայրենի գորովով ուզած էր բուրումնաւէտ սպեղանի մը դնել իր խեղճ աղջիկներուն տխրած ու վիրաւոր սրտերուն վրայ, զիրենք առժամապէս մխիթարելու եւ զօրացնելու համար, ի տես ապագայ փորձանքներուն ալ որ իրենց կը սպասէին:

Զ.

ՏԻՐԱՄՕՐ ԵՐՐՈՐԴ ՈՒ
ՎԵՐՋԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Շաբաթ օր, 13 Հոկտեմբեր 1973ին, տարեդարձն է Ֆաթիմայի Տիամօր վերջին երեւման՝ Փորթուկալի երեք մանուկներուն: Ազիթայի Տիրամօր ալ երրորդ եւ վերջին պատգամին օրն է, որով կ'իմացնէր լուրը՝ գալիք սարսափելի մեծ պատիժի մը, եթէ մարդկութիւնը դարձի չգար:

Երկնքի եւ երկրի Թագուհին կ'ուզէ նախ նկատի առնել տալ շատ սերտ կապակցութենը՝ Ազիթայի եւ Ֆաթիմայի ղէպքերուն եւ պատգամներուն: Աստուածամօր երեւումները եւ պատգամները՝ իրարու կը միանան եւ գիրար կ'ամբողջացնեն: Միայն մէկ եւ միշտ նոյն Սուրբ Կոյս Մարիամն է, Աստուծոյ Մայր, Եկեղեցոյ Մայր եւ նաեւ բոլոր ազգերուն որ մարդկութիւնը կը կազմեն: Միեւնոյն Սուրբ Կոյսն է որ գրեթէ երկու դարէ ի վեր, կը հաճի ցնցիչ կերպերով եւ միջոցներով այցելել բազմաթիւ տեղեր, ինչպէս Փարիզ, Սալէթ, Լուրտ, Բելլըվուազէն, Բոնիթմէն, Ֆաթիմա, Կարապանտալ, Սան

Տամիանոյ...եւ դեռ շատ ուրիշ տեղեր եւ մեր օրերուն՝ ամէն օր կը հաճի երեւնալ Իւուկոսլաւիոյ՝ Մետիկորիէի գիւղին մէջ, դէպի երկինք առաջնորդելու համար մոլորած մարդկութիւնը: Ուխտաւոր Տիրամայրն է, Անարատ Յղացեալը, Թագուհին տիեզերքի՝ որ կ'իջնէ երկիր, ուր սատանան այնքան աւերներ կը գործէ, ջախջախելու համար անոր հպարտ ու յաւակնոտ գլուխը, եւ փրկելու Եկեղեցին ու աշխարհը՝ որ միշտ աւելի ենթակայ դառնալու վրայ է անոր անգութ բռնութեան:

Այդ օրն ալ (13 Հոկտեմբեր) սովորութեան համաձայն կանուխէն ելլելով, ինչպէս միւս օրերուն, Սուրբ Հաղորդութեան աղախին կոչուած կոյսերու հասարակութիւնը, յետ առաւօտեան ժամերգութեան, պաշտամունքի եւ լուռ մտածական աղօթքի ժամուն, սկսաւ միասնաբար ըսել օրուան առաջին վարդարանը:

Հագիւ սկիզբ տրուեցաւ վարդարանի աղօթքին, խորհրդաւոր լոյս մը սկսաւ տարածուիլ մատրան մէջ եւ, սովորականէն աւելի, այս 13 Հոկտեմբերին, անբացատրելի բուրում մը նորէն սկսաւ սիւռուիլ Անարատ Յղացեալի արձանէն, կարծէք թէ Ան ուզէր անով մխիթարել եւ քաջալերել իր ներկայութեամբ այդ աղօթող փոքրիկ հասարակութիւնը: Այդ օրը հասարակաց պատարագ չկար վանքին մէջ:

Նախաճաշէն ետք, Քոյր Ագնէս քաշուեցաւ իր սենեակը, բայց չկրցաւ իր աշխատաքին վրայ կեդրոնանալ: Ա՛յքան յուզուած էր այս վերջին պատահարներէն՝ որ չէր կրնար իր ուշադրութիւնը կեդրոնացնել ուրիշ բանի վրայ: Ուստի չկարենալով ուրիշ ոչինչ ընել, մինակը դարձաւ փոքր մատուռը: Ամենասուրբ Կոյս Մարիամը, հոն, իրեն կը սպասէր:

Երբ Քոյր Ագնէս հագիւ խաչի նշանը հանեց առաւօտեան սկսած վարդարանը շարունակելու համար, արձանին անոյշ ձայնը կրկին լսուեցաւ՝ տալու համար երրորդ եւ վերջին պատգամը, ամէնէն ծանրը եւ ամէնէն կարեւորը:

«Սիրելի աղջիկս, լաւ մտիկ ըրէ այս բանին որ հիմա պիտի ըսեմ քեզի եւ հաղորդէ զայն մեծաւորիդ: (Լուութիւն) Ինչպէս արդէն ըսած եմ նախապէս, Եթէ ՄԱՐԴԻԿ ԴԱՐՁԻ ՉԳԱՆ, Հայրը թոյլ պիտի տայ որ մեծ պատիժ մը իյնայ բոլոր մարդկային ցեղին վրայ: Անտարակոյս սարսափելի պատուհաս մը պիտի ըլլայ, աւելի ծանր քան ջրհեղեղը, այնպիսի՛ բան մը՝ որ բնաւ տեսնուած չէ:

«Երկինքէն կրակ պիտի տեղայ:

«Այս պատիժով մեծ մասը մարդկութեան պիտի ոչնչանայ: Քահանաները պիտի մեռնին՝ ինչպէս հաւատացեալները: Մարդիկը որոնց պիտի խնայուի, այնպի-

սի՛ տառապանքներ պիտի ճանչնան որ պիտի նախանձին մեռածներուն վրայ:

«Այն ատեն միակ գէնքը որ ձեզի պիտի մնայ ՎԱՐԴԱՐԱՆՆ Է եւ ՆՇԱՆԸ (Խաչը) ՈՐ ՁԵԶԻ ՁԳԵՑ ԻՄ ՈՐԴԻՍ:՝

«Ամէն օր վաղարանի աղօթքը ըսէք: Վարդարանի աղօթքով աղօթեցէք եպիսկոպոսներուն եւ քահանաներուն համար: Սատանային ազդեցութիւնը մտած է մինչեւ եկեղեցւոյ մէջ անգամ, ծիրանաւորներ՝ ծիրանաւորներու զէմ կ'ելլեն, եպիսկոպոսներ՝ եպիսկոպոսներու զէմ:՝

¹ Մետիրկորիէի Տիրամօր յայտնութիւններուն համաձայն, ըստ Radio Maria-ի Տնօրէն Փատրէ Լիւիոյ Ֆանցակային, երկինքէն տեղացող «հիւլեական ռումբին» կրակէն աշխարհը պրծաւ շնորհիւ Տիրամօր բարեխօսութեան եւ նաեւ ջերմեռանդ հոգիներու աղօթքով եւ ապաշխարութեամբ ու Ռուսաստանի դարձով, միշտ համայնավարութեան փլուզումէն առաջ, երբ երրորդ համաշխարհային պատերազմի մը իրական պայմանները ստեղծուած էին: Հոս ըսուածները կը յիշեցնեն նաեւ Յիսուսի հետեւեալ խօսքերը «Անկէ յետոյ երկնքի վրայ պիտի տեսնուի Մարդու Որդիին նշանը, եւ այն ատեն երկրի բոլոր ազգերը պիտի լան ու պիտի տեսնեն Մարդու Որդին որ կու գայ երկնքի ամպերուն վրայէն գօրութեամբ եւ շքեղ փառքով» (Մտթ. Իդ. 30):

² Այս խօսքերը սարսուռ պատմաւեցիին թեմին եպիսկոպոսին. Շուտով ինքն անձամբ փորձը պիտի առնէր այս կանխասացութեան իրականութեան:

«Քահանաները որ զիս կը պատուեն՝ պիտի արհամարհուին, պիտի նախատուին ու հակառակութիւն պիտի կրեն նոյնիսկ իրենց եղբայրակիցներէն: Խորանը, եկեղեցին պիտի կողոպտուին. Եկեղեցին պիտի լեցուի երկակենցաղ աշխարհի հոգին առած մարդոցմով:

«Սատանային թելադրութեամբ շատ մը քահանաներ ու կրօնաւորներ պիտի թողուն իրենց կոչումը: Սատանան կատաղութեամբ պիտի յարձակի մասնաւորապէս անոնց դէմ որ իրապէս նուիրուած են Հօր Աստուծոյ:

«Իմ ցաւիս պատճառը՝ շատ մը հոգիներու կորուստն է: Եթէ մարդիկ շարունակեն նոյնպէս մեղանչել, եւ ամէն չափէ անդին անցնին, նոյնիսկ մեղքերու թողութիւն պիտի չգտնեն»³:

«Քաջութեամբ հաղորդէ այս պատգամը քու մեծաւորիդ:

-Ով է իմ մեծաւորս, կը հարցնէ - Քոյր Ազնէս:

- Քու մեծաւորդ քու Եպիսկոպոսդ է որ կը ղեկավարէ քու հասարակութիւնդ: Կը փափաքի՞ս ուրիշ բան հարցնել:

«Այսօր վերջին անգամն է որ կենդանի ձայնս կը լսես: Ասկէ յետոյ պիտի

³ Որովհետեւ առանց գղջումի՝ չկայ ոչ մէկ ներում:

մտիկ ընես պատգամաւորիս (պահապան
հրեշտակին) եւ քու մեծաւորիդ:

«Շատ վարդարաններ ըսէք: Աս-
տուծոյ կամքով՝ միայն ես կրնամ ձեզ
փրկել այն աղէտներէն որ յայտնեցի ձե-
զի: Ով որ իմ վրաս դնէ իր վստահու-
թիւնը՝ պիտի փրկուի»:

Այս պատգամները թէպէտ շատ
ծանր եւ խիստ, բոլոր աշխարհի կը վե-
րաբերին, բայց ո՛րքան մխիթարական ու
քաջալերիչ են անոնց համար՝ որ Աս-
տուածամայրը իբրեւ իրենց ամենահարա-
գատ մայրը կը նկատեն, կը սիրեն եւ կը
պատուեն:

Է.

ՔՈՅՐ ԱՔՆԷՍԻ ԲՈՒԺՈՒՄԻՆ ՀՐԱՇՔԸ

6 Յուլիս 1973-ին, առաջին պատգամին ընթացքին, արձանէն բխող ձայնը հարց դրած էր Քոյր Ազնէսին՝ թէ արդեօք «խլուլթեան հիւանդութիւնը քեզ կը տառապեցնէ⁶»: Բայց անմիջապէս ապահովցուցած էր նաեւ՝ թէ «Լստահ եղիր՝ պիտի առողջանաս»:

Պատգամներու արժանահաւատ ըլլալը, վերջ ի վերջոյ, կախում ունէր այս խոստումին իրականացումէն:

Արդ, վերջին պատգամին տարեդարձին, 13 Հոկտեմբեր 1974-ին, Սուրբ Հաղորդութեան պաշտամունքի պահուն, Քոյր Ազնէս յանկարծ կ'առողջանայ խլուլթենէն: Նոյն երեկոյ անձամբ կը հեռախօսէ Գերպօժ. Իթոյին եւ հետը կը խօսի բոլորովին առողջ մէկու մը նման: Յաջորդ օրը ախտաճանաչում կատարող բժիշկին վճիռը կ'ըլլայ՝ «Լսողութիւնը՝ normal - բնականոն»:

Սկիզբը, սակայն, երբ Քոյր Ազնէս սկսած էր լսողութեան դժուարութիւններ զգալ, բժիշկը համոզուած էր որ այլեւս բնաւ պիտի չլսէ եւ ոչ մէկ յոյս տուած

էր առողջանալու: Նոյնիսկ կառավարութեան դիմում ըրած էր իրեն համար թոշակ ստանալու՝ իբրեւ ցկեանս խլութեան դատապարտուած անձ: Մանաւանդ թէ իր ազնուութիւնը հասած էր այն աստիճանին որ սկսած էր սորվեցնել՝ խօսքերը ուրիշներու շրթունքներուն վրայ կարդալու արհեստը: Իրեն համար լսողութեան կարողութիւնը վերստանալ՝ բժշկական կերպով անկարելի բան մըն էր: Հետեւաբար բժիշկը չէր կրնար բնական առողջութեան մը հաւատալ:

Սակայն այս լսողութեան առաջին վերստացումը, տեւած էր միայն վեց ամիս, եւ յետոյ Քոյր Ագնէս նորէն դարձած էր առաջուան պէս խուլ: Աստուած կրկին ուզած էր իրմէ այս գոհաբերումը:

Ո՞ւր մնաց, այն ատեն, Տիրամօր խոստումը՝ «Վստահ եղիր՝ պիտի առողջանաս»ը: Սուրբ Կոյսը չի կրնար ստել: Այդ առաջին լաւնալու երեւոյթը՝ առ հաշիւ կանխում մըն էր վերջնական պարգեւին: Վեց տարի յետոյ է որ վերջնականօրէն պիտի առողջանար, Սուրբ Հաղորդութեան կատարած հրաշքով մը, 1982-ի Մայիս ամսուան վերջին Կիրակին, Հոգեգալստեան օրը, երբ Սրբագործուած Նշխարով, ուստի Քրիստոսի մարմնով, կ'օրհնեն գինքը:

Աստուծոյ ու մեր ալ Մայրիկը, պահած էր իր խոստումը: Ինչպէս առաջին անգամուան բուժումը, ա'յսպէս ալ

*այս վերջնական ու ամբողջական առող-
ջացումը՝ Սուրբ Հաղորդութեան օրհնու-
թեամբ կատարուած էր, յատկանշական
ըլլալով Տիրամօր՝ կապել իր հրաշագոր-
ծութիւնները Տապանակի մէջ բնակող իր
Որդւոյն:*

Ը.

ՏԻՐԱՄՕՐ ԼԱՅՆ

Բոլոր մինչեւ հիմա մեր պատմած հրաշապատում պատահարները, որոնց բնական բացատրութիւնն չկայ, շուտով, սկսեալ 4 Յունուար 1975-էն, ոչ թէ շուքի մէջ մնացին՝ այլ մեծապէս գերազանցուեցան, շատ աւելի ստէպ պատահող եւ միշտ աւելի սրտաճմլիկ երեւոյթով մը՝ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ ԱՐՑՈՒՆՔԻ ՀՈՍՈՒՄՈՎ:

4 Յունուար 1975-ը, ամսուան եւ Սուրբ Տարուան առաջին շաբաթն էր, միանգամայն քսանի չափ միաբանութեան քոյրերուն կրթութեան փակման օրը:

Պատարագէն եւ առաւօտեան աղօթքէն ետք, մայրապետները նուիրուեցան իրենց առօրեայ գործերուն, ինչպէս միշտ: 9.30-ի ատենները, ժամկոչ քոյրը (Քոյր Ազնէս) անդրադարձաւ որ Տիրամօր արձանին պատուանդանը թրջած էր: Վեր նայելով տեսաւ որ արցունքները արձանին աչքերէն կը հոսէին: Մտահոգուած ուշադրութեամբ դիտեց... Չէր կրնար տարակուսիլ, արցունքները կը բխէին բիբերէն եւ կը հոսէին երեսէն

վար: Անոնցմէ ոմանք կզակէն կաթելով պատուանդանը կը թրջէին:

Հոն վազեց հասարակութիւնն ամբողջ եւ մնաց ցաւով ապշած...

Միայն այդ շաբաթ օրը, Աստուածամայրը երեք ազամ արտասուած էր՝ առաւօտ ժամը 9,30-ին, կէսօրէն յետոյ ժամը 13,30-ին, երեկոյ ժամը 18,45-ին:

Գերապայծառ Իթոյ հագիւ երեւոյթին լուրը առած, ճամբայ ինկած էր դէպի վանք: Ճեպընթաց շոգեկառքով 4-էն 5 ժամ հարկաւոր էր իր աթոռանիստ Նիիկաթա քաղաքէն Ագիթա հասնելու համար ու, անկէ ետք, հարկադրուած էր վարձակառք ալ առնել Իւզաւատա լեռը հասնելու, ուր կառուցուած էր իր հիմնած վանքը: Հոն հասած էր երեկոյեան, ճիշտ երրորդ անգամ արցունքներ թափելու պահուն:

Եպիսկոպոս Իթոն անձամբ յուզիչ արտայայտութիւններով պատմեց ինծի Տիրամօր արցունքներուն առաջին իր տեսութիւնը: Հոն հասնելուն պէս, հագիւ մուտք գործած մատուռ, յանկարծ արցունքները սկսած էին ծորիլ Տիրամօր աչքերէն, բայց այնպիսի՝ առատութեամբ որ բոլորովին յուզած էր գինքը: Ես ալ միայն լսելով՝ խորապէս զգացուած մնացի, առանց գիտնալու որ միեւնոյն վրդովիչ ու կսկծեցուցիչ տեսարանը՝ ինծի ալ վերապահուած էր, եւ չորս անգամ ականատես ըլլալու շնորհքը տրուած էր մե-

զիւ լացերէն մէկուն՝ բախտաւոր եղանք երկուքս միասին վկաներ դառնալու:

Սրբութիւն ի բազմոցի»էն, (այսինքն Սուրբ Հաղորդութեան երկրպագութեան արարողութենէն) ետք, Սուրբ Կոյսին ըսած հրեշտակը երեւցաւ Քոյր Ազնէսին եւ ըսաւ.

«Մի՛ գարմանաք տեսներով որ ամենասուրբ Կոյս Մարիամը կ'արտասուէ: Նոյնիսկ երբ միայն մէկ հոգի մը դարձի գայ, թանկագին է իր սրտին համար: Անցոյց կու տայ իր ցաւը եւ կը փափաքի արծարծել ձեր հաւատքը, որ այնքան դիւրաւ կը ձգտի տկարանալու: Հիմա որ տեսաք իր թանկագին արցունքները, զինքը մխիթարելու համար քաջութեամբ խօսեցէք ամէնուն իր մասին: Տարածեցէք իր ջերմեռանդութիւնը՝ զինքը եւ իր աստուածային Որդին փառաւորելու նպատակով»:

Այս 4 Յունուար 1975 թուականէն սկսեալ, որ սկիզբն եղաւ Աստուածամօր Ազիթայի մէջ արցունք թափելուն, մինչեւ 15 Սեպտեմբեր 1981, (եօթ ցաւերու Տիրամօր տօնը, որ արտասուլթորումի վերջը նշեց), ուստի գրեթէ 7 տարուայ տեւողութեամբ, Ամենասուրբ Կոյսը Մարիամ լացաւ 101 անգամ, գրեթէ 2000 ականատես վկաներու առջեւ որ նախախնամաբար հոն կը գտնուէին, առանց յատուկէն գայն փնտռելու, որովհետեւ

Գերապայծառ իթոն արգիլած էր որեւէ կերպով ծաւալելու լուրը:

Դեռ գանձի նման պահած եմ քովս թանկագին ցանկը 101 լացերուն, թուականով, օրով եւ ժամով, ներառած նաեւ թիւը վկաներուն որ հոն կը գտնուէին:

Անձնապէս վկայ հանդիսացած եմ 23-րդ արցունքի հոսման 1979-ի 24 Մայիսին: Նոյնիսկ լուսանկարած եմ գայն: Պատկերը ինձի համար մասունքի պէս է, որովհետեւ իրական մարդկային արցունքներ էին որ իր աչքերէն վար կը թափէին: Բացի անկէ, բոլորովին անակնկալ պարագաներու մէջ, ներկայ գտնուեցայ վերջին երեք լացերուն՝ 99-րորդին, 100-րորդին ու 101-րորդին, որ վերջինն եղաւ:

Աստուած եւ իր Սուրբ Մայրը՝ օրհնեալ ըլլան:

Հ. Թովմաս Եագուտա ալ, որ մատրանապետ եւ հոգեւոր առաջնորդն էր Քոյր Ազնէսի, ամէն անգամ որ ներկայ գտնուէր Տիրամօր աչքերէն բխող արցունքի տեսարանին, միշտ «Չարչարանքի Խորհուրդին» վարդարանը ըսել կու տար մասնակցողներուն: Վերջապահութեան Սուրբ Կոյսին արցունքները կը չորցնէր եւ խնամքով կը հաւաքէր ապակիէ ամանի մը մէջ:

Ինքն է, դարձեալ, ամէնէն աւելի ճշգրիտակաւոր եւ ականատես վկան Ագիթայի Տիրամօր շուրջ պատահածներուն

եւ իրաւասու անձը անոնց մասին խօսելու եւ առարկայական դատաստան մը տալու՝ ըլլայ իրողութիւններուն թէ դերակտար անձերուն:

Ինքն է որ, Գերապայծառ Իթոյի հաւանութեամբ, յանձնեց արիւնով, քրտինքով եւ արցունքներով թրջած բամպակի կտորները՝ Ագիթայի եւ Ճիֆուի համալսարաններուն «օրինական բշխչիներու» քննութեան:

Մասնագիտական գննումներու արդիւնքը վճռական եղաւ: Ստուգուեցաւ որ ճշմարդապէս մարդկային քրտինք եւ արցունք էր ներկայացուածը, եւ արիւնը կը պատկանէր «Օ» արեան խումբին:

Այս բոլոր ապացոյցները եթէ նկատի առնենք, կը համոզուինք որ անկարելի է որ մարդկային էակ մը, ով որ ալ ըլլայ, պարզ, չոր ու շատ տեղեր ճաթուտած փայտէ արձանէ մը՝ կարենայ ա՛յնքան մեծ քանակութեամբ արիւն, քրտինք եւ արցունք քամել:

Այն ատեն հարց կը դրուի՝ թէ ո՞վ է հեղինակը այս բոլորին:

Թ.

ԱՅՍ ԵՐԵՒՈՅԹՆԵՐՈՒՆ ԾԱԳՈՒՄԸ

Անհերքելի ճշգրտութեամբ Հ. Ես-
գուտա իր «Ագիթայի դէպքերու ջատա-
գովութիւն» գրքին մէջ ցոյց կու տայ որ
այս արցունքի երեւոյթները՝ չեն կրնար
արդիւնք ըլլալ՝

- ոչ մարդու մը միջամտութեան,
(այս պարաագային Քոյր Ագնէսի) իբրեւ
օժտուած գերմարդկային ուժերով:

- ոչ սատանային միջնորդութեան,
նկատած այն բազմաթիւ հոգիներու դար-
ձերը, բժշկութեան հրաշքները, շնորհնե-
րը եւ գերբնական առանձնաշնորհու-
թիւնները որ շատեր ստացան:

- այլ արդիւնք են մի միայն աս-
տուածային միջամտութեան: Այնքան որ
ինքնին Գերապայծառ Իթոյ, իր 1982-ին
Հռոմի ներկայացուցած թղթածրարին
մէջ, պաշտօնապէս խնդրեց որ Սուրբ Ա-
թոռը ինքնին յայտարարէ՝ Ագիթայի
դէպքերու գերբնական ծագումը:

Յետ երկու տարիներու քննու-
թեան, Հռոմ ճանչցաւ երկնքի միջամտու-
թեան հարազատութիւնը, եւ 1984-ի
Չատկին, 22 Ապրիլին, հովուական նամա-

կով մը հրապարակեց բոլոր եկեղեցիներու մէջ:

ժ.

ԻՆՉ ԿՈՒՋԷ ՏԻՐԱՄԱՅԸ ՄԵՁՄԷ

Ոմանք մեզի այս հարցը կը դնեն՝ թէ «ինչո՞ւ այսքան հրաշագործ երեւոյթներով Աստուած մեզի կու տայ Սուրբ Կոյսին պատգամները»:

Պարզ է պատասխանը. «ոպէսզի վկայէ եւ հաստատէ մեր երկնաւոր Մօր պատգամներուն ճշմարտութիւնը ու մենք՝ չըլլա՛յ որ անտեսենք զանոնք ու կորսնցնենք մեր հոգիները»:

Հրաշքը երկինքէն եկող նշան մըն է եւ նպատակ ունի ոչ միայն վկայելու Աստուծոյ կողմէն յայտնուած պատգամներուն ճշմարտութիւնը, այլ նաեւ մեզ քաջալերելու ու մխիթարելու՝ ապահովելով Երկնաւոր Հօր նախախնամութիւնը ու Երկնաւոր Մօր հովանաւորութիւնը: Պէտք է անհուն երախտագիտութեամբ ընդունինք զանոնք, յիշելով որ ոչ ոք կրնայ արգելք ըլլալ որ Աստուած շարունակէ այս դարուն ալ՝ պատգամներ տալ մարդկութեան եւ հաստատել զանոնք նշաններով: Բնական է որ Եկեղեցւոյ

կ'իյնայ դատել եւ վաւերացնել, արդիւնքներէն ալ հետեւցնելով՝ թէ արդեօք Աստուծոմէ՞ կու գան թէ ուրիշ պղտոր աղբիւրներէ:

Յիսուս ալ իր երկնային պատգամները՝ անթիւ հրաշքներու վկայութեամբ հաստատեց, ներկայացնելով զանոնք իբր իրարմէ անբաժանելի տարրեր եւ մաս կազմող յայտնութեան պարգեւին:

Հոս ալ Ագիթայի Տիրամօր միջամտութիւնները, հրեշտակին երեւումները ու հրաշքները՝ մաս կը կազմեն երկնային պատգամներուն:

Ծանր պատգամներ են որ Աւետարանի եւ Յայտնութեան գիրքի ազդարարութիւնները եւ աշխարհի վերջին աղէտները կը յիշեցնեն, հրաւիրելով մեզ զանոնք լրջօրէն մեր ուշադրութեան առարկան դարձնելու: Աստուածամօր արցունքները՝ ամէն մարդկային իմաստութիւն գերազանցող՝ բաձառիկ լրջութիւն մը կու տան իւրաքանչիւր պատգամի բառերուն: Երբ գաւակները մօր մտիկ չեն ըներ, այլեւս չի խօսիր, կը լռէ ու միայն կու լայ: Չկայ Տիրամայր մը որ այնքան շատ լացած ըլլայ: Ո՛վ գիտէ ինչո՞ւ:

Նկատենք մայրենի սիրոյն փափկութիւնը եւ Աստուծոյ մը Մօր խոնարհամտութիւնը, որ կու լայ իր խեղճ գաւակներուն վրայ, եւ ո՛րքան անոնք աւելի կը նախատեն իր պաշտելի Աստուածորդին, ա՛յնքան աւելի դժբախտ կը դառ-

նան, եւ ա՛յնքան աւելի ցաւ կը պատ-
ճառուեն Երկնաւոր Մօր:

Սիրոյ տկարութիւն, մայրենի սի-
րոյ խոնարհութիւն: Բայց այս տկարու-
թիւնը, այս խոնարհութիւնը իր մեծա-
գոյն զօրութիւնն է:

Ո՞վ կրնայ ըսել մօր մը արցունք-
ներուն զօրութիւնը, Աստուծոյ մը Մօր
լացերուն ոյժը:

ԺԱ.

ՀԱՐԱԶԱՏ ՄՕՐ ՄԸ ՑԱԻԵՐԸ

Այլեւս չեմ գիտեր ի՛նչ տարիք կը-
նայի ունենալ, բայց կը յիշեմ որ օր մը
մայրս լացուցի, այնքան որ ստպեցի գին-
քը ձեռք առնել գաւազանը՝ զիս սրբա-
գրելու համար...

Իրականութեան մէջ՝ սիրոյ գաւազան էր
այդ որ իր սիրտը կը կոտրէր, նախ քան
իմ սէգ հպարտութիւնս եւ խիստ եսասի-
րութիւնս կոտրելու: Խեղճ մօրս ո՛րքան
վիշտ պատճառած պէտք է ըլլամ... Որով-
հետեւ մինչ ճկուն ճպոտը կը շողացնէր,
տեսայ իր գեղեցիկ դէմքը բոլորովին
տխրութեամբ այլափոխուած եւ իր չք-
նաղ կապոյտ աչքերը արցունքով լե-
ցուած... Գաւազանի հարուածները չեմ
յիշեր, իբրեւ թէ զգացած չըլլայի... Բայց
լաւ կը յիշեմ իր մեծ փայլուն արցունքի
կաթիլները, աւելի գեղեցիկ քան բոլոր
աշխարհի մարգարիտները, որ առատօրէն
կը հոսէին... Եւ զգացի խոր խոնարհու-
թիւնը զինքը լացնող սիրոյն... Անկէ
ետք, կարծեմ, զինքը լացուցած չեմ՝ բայց
եթէ գուցէ ուրախութենէն, նոյնիսկ երբ
այլեւս արցունք չունէր՝ առաջուց շատ
թափած ըլլալուն համար, յատկապէս մեծ
մեկնումի օրը, 1949ին, երբ մենք, երկու
իր Աւետարանի քարոզիչ գաւակներս ալ,

մեկնած էինք հեռաւոր օտար աշխարհներ առաքելութեան՝ առանց դարձի յոյսի, գէթ այն ժամանակներուն համար:

Եթէ մօր մը արցունքները այնքան հզօր են արդէն փոքրիկ գաւակի մը սրտին վրայ, որ իր խելքով միայն կ'ուզէ գործել, ի՞նչ ըսել խոնարհ եւ անարատ Աստուածամօր արցունքներուն ամենակարող զօրութեան համար՝ իր մեծ մեղաւոր գաւակներուն սրտին վրայ՝ որ ապստամբ ու ապերախտ ալ են միանգամայն: Արցունքը վերջին պաղատանքն է սիրոյ մը որ յոյսը կտրած է այլեւս սիրասուն գաւակէն փոխադարձ սէր գտնելու:

Որքան սէրը մեծ է, ա'յնքան աւելի տառապանքը աւելի դառն է: Աստուածամայրը կու լայ, ըսել է որ իր սիրտը խորապէս վիրաւորուած է: Այն ատեն ամէն բան պէտք է ընել զինքը մխիթարելու համար, սփոփելու համար իր ցաւագին սիրտը:

Սիրաքուզայի մէջ (Սիկիլիա-Իտալիա), Ամենասուրբ Կոյսը միայն երեք ու կէս օր լացեր է: Ագիթայի մէջ 101 անգամ, գրեթէ շուրջ եօթ տարի: Այս եօթ ցաւերու Տիրամօր յորդառատ արցունքներու հոսումը՝ կը յայտնէ աշխարհի ալ մեղքերու ծովածաւալ հեղեղը եւ ծանրութիւնը՝ որ պատճառն է արցունքներուն:

Այս սուրբ արցունքները մեզի համար թափուած, Աստուծոյ գանձը կը

կազմեն, եւ Յիսուսի անհուն արդիւնքներուն հետ, մեր փրկագինն են: Ուստի Սուրբ Կոյսին արցունքները, միացած Յիսուսի թանկագին արեան, կրկնակի հեղում մը կը կազմեն միեւնոյն Սրտէն բխած: Փրկչին չարչարանքները եւ փրկագործութեան խորհուրդն է որ, իր Մօր մասնակցութեամբ, կը շարունակուի աշխարհի վրայ:

Տիրամօր Սրտին ցաւը՝ արձագանգն է Խաչեալին սրտի ցաւին:

Սուրբ Կոյսին արձանէն վազող քրտինքն ու արիւնն ալ կ'ուզեն մեզի յիշեցնել Յիսուսի քրտինքն ու Գեթսեմանիի մէջ իր թափած արիւնը, հրաւիրելով մեզ վերանորոգելու մեր ջերմեռանդութիւնը նաեւ Փրկչին Սրտին եւ Արեան:

Երջանիկ մեղաւորներ ենք որ այսպիսի Մայր մը ունինք որ ամենակարող է Աստուծոյ Սրտին վրայ եւ ա՛յնքան ջերմօրէն կու լայ իր ապերախտ եւ շեղած զաւակներուն դարձին համար: Այսպիսի՝ արցունքներու եւ ցաւերու զաւակները՝ չեն կրնար կորսուիլ, կը բաւէ որ մինչեւ վերջ չդիմադրեն զղղումի ու դարձի շնորհքերուն:

Երբ Աստուածածին Մայրիկը կու լայ իր զաւակներուն վրայ, այդ արցունքները բարերար ցօղ մը կ'ըլլան, մանաւանդ թէ, աստուածային արիւնին միացած՝ ճշմարիտ հեղեղ մը կը դառնան համայն աշխարհի համար, որու մատա-

կարարն է Ինքը՝ Մարիամ: Այս հեղումը միաժամանակ ամէնէն կատարեալն է բոլոր գոհաբերումներուն մէջ:

Ով Մայր սիրագեղ, ինչո՞ւ կու լաս, որո՞ւ վրայ կ'արտասուես... Ո՛հ, շատ լաւ գիտեմ: Բոլոր աշխարհ անձնատուր է մեղքի, ուրեմն, գերի դարձած է սատանային: Սակայն, առանց սխալելու վախի, կրնամ ըսել ու հաստատել՝ թէ այդ այրող արցունքներդ՝ քու իսկ գաւակներդ են որ աչքերէդ կը խլեն, անոնք որ այսօր մեծ թիւով, կ'ապրին ամբողջապէս Աստուծոյ մոռացութեան մէջ, մխրճած աշխարհի ու մարմնի սուտ հաճոյքերուն մէջ, արհամարհելով Աստուծոյ եւ Եկեղեցոյ պատուիրանները եւ անխուսափելիօրէն դիմելով դէպի կորուստ:

Մենք քահանաներս ալ, այս Աստուծոյ ժողովուրդին միջեւ, պէտք չէ՞ արդեօք (բոլոր իրական սուրբերուն պէս) առաջիններն ըլլաք մեծ «մեղայ» մը ըսելու վառ գղջումով: Մենք Աստուծոյ ծառայութեան նուիրուածներս, որ իր աչքին բիրերը եւ սրտին սիրուած նոր Յովհաննէսները կը կազմենք, մենք չէ՞նք արդեօք գլխաւոր պատճառը մեր ամէնուս Մօր՝ ամէնէն դառն արցունքներուն: Ինքը մայրն է քահանայ Քրիստոսի, ուստի բոլոր քահանաներուն. եւ սակայն ամէնէն առաջ այս անհաւատարիմ նախասիրուած հոգիներուն վրայ չէ՞ որ արցունք կը թափէ:

Ո՛հ, այո՛, իմ սրտիս խորէն գիտեմ, կը զգամ, իր ամենամեծ ցաւը տեսնելն է որ իրեն նուիրուած զաւակներուն մէջ՝ կա՛ն որ այլեւս չեն սիրեր զինքը, որ այլեւս չեն աղօթեր իրեն, որ այլեւս մտիկ չեն ըներ իր Որդւոյն խօսքերուն, որ չեն հետեւիր Եկեղեցւոյ Հովիւներուն եւ Աւետարանի վարդապետութեան, չեն ուզեր գիտնալ թէ Սուրբ Հաղորդութեան մէջ՝ Յիսուս Քրիստոս ճշմարտապէս ներկայ է, թողլով զինքը մինակ՝ սառած տապանակին մէջ, մանաւանդ թէ շատ անգամ անթիւ սրբապղծութիւններով անարգուած....

Ա՛յս է որ զգացի երբ հոնտեղի մայրապետ մը ըսաւ ինծի թէ՛ Առաջին ազամն էոր Սուրբ Կոյս Մարիամ իր արցունքները քահանայի մը ցոյց կու տայ»⁴

Անշուշտ, մեծ շնորհք մըն է տեսնել Տիրամօր արցունքները, բայց այդ խօսքը դեռ աւելի գիտակից ըրաւ զիս

⁴ Այդ թուականէն ասդին, ուրիշ զանազան տեղեր ալ, օրինակ Իտալիոյ Civitavecchia ֆաղափն մէջ, Տիրամօր արձաններ իրենց աչքերէն արցունք եւ արիւն ալ թափեր են, ոչ միայն ֆահանգներու աչքին տակ, այլ նաև տեղւոյն Առաջնորդին՝ Գերապայծառ Ճիրովամոյ Կրիլլոյի ձեռներուն մէջը 15 մարտ 1995-ին Այդ թուականէն ասդին, ուրիշ զանազան տեղեր ալ, օրինակ Իտալիոյ Civitavecchia ֆաղափն մէջ, Տիրամօր արձաններ իրենց աչքերէն արցունք եւ արիւն ալ թափեր են, ոչ միայն ֆահանգներու աչքին տակ, այլ նաև տեղւոյն Առաջնորդին՝ Գերապայծառ Ճիրովամոյ Կրիլլոյի ձեռներուն մէջը 15 մարտ 1995-ին:

իմ պատասխանատուութեանս եւ քահանայ եղբայրակիցներուս միացնող կապին: Այս փոքրիկ վանքին մէջ, որ նուիրուած է Սուրբ Հաղորդութեան, հասկցայ որ Յիսուս կը տառապէր ամէն բանէ աւելի իր նախասիրած հոգիներուն, (քահանաներուն ու մայրապետներուն) ճիշտ այս մեծ խորհուրդին հանդէպ ցոյց տուած անտարբերութենէն ու նախատինքներէն:

Արդէն Գազերթայի մէջ (Խտալիա), Թերեզա Մուսքոյ, (1976-ին փոխուած առ Աստուած), աւետած էր Տիրամօր կողմէն, որ իր արցունքները պիտի տեսնուէին ուրիշ քաղաքներու եւ ուրիշ ժողովուրդներու մէջ ալ, ու տխուր շեշտով մը աւելցուցած էր՝ թէ «Քանիներ իմ առանձնաշորհեալ քահանաներէս անհաւատարիմ են եւ դուրս վտարած են զիս իրենց սրտէն»:

Ի՛նչ անդունդ ցաւի... Սակայն իր մայրենի սրտին սիրոյ բոցէն մղուած, դեռ կը ջանայ շաժեւ իր գաւակներուն սրտերը՝ վերջին յայտարարութիւն մը կատարելով՝ «Բայց ես իրենց մայրիկն եմ: Զիրենք առաջուրնէ ալ աւելի կը սիրեմ: Քիչ մը զղջում բաւական է»: «Քիչ մը զղջում» պիտի բաւէր, կ'ըսէ Ան: Բայց մեր այնքան անոյշ Մայրկը, նոյնիսկ այս քիչ մը զղջումը չի գտներ շատ անգամ եւ ասոր համար է որ կու լայ «Մխիթարիչներ» փնտռելով իր Որդիին

համար եւ վեհանձն հոգիներ որ ուզեն հատուցում ընել մեղքերու փոխարէն:

Ինչպէս ան միակ Մայրն է «ըստ բնութեան» որ իրաւունք ունի պաշտելու իր իսկ գաւակը՝ Յիսուս, նաեւ միակ Մայրն է «ըստ շնորհաց», որ կարողութիւնն ունի զինքը պաշտել տալու միւս իր անթիւ գաւակներու բազմութենէն՝ միա՛յն իր ամենակարող սուրբ արցունքներու զօրութեամբ:

Գողգոթայի վրայ Յիսուս խաչին գամուած՝ Յոհովհաննէսի միջոցով իր Մայրը մեզի տալէն յետոյ, գոչեց «Ծարաւի եմ»: Այդ վայրկեանին մեծ ուժակերով խմեց այս իր չարչարանքի ճշմարիտ բաժակէն՝ որ իր ցաւագին Մօր խոցուած անարատ սիրտն էր...:

Ամենասուրբ Կոյսը Մարիամ, բոլոր իր կեանքի ընթացքին, բայց մասնաւորապէս խաչին ստորոտը, կրեց ամէն բան որ Յիսուսի Սիրտը կրած է:

Մօր եւ Որդիին վիշտերը, ցաւերը, տառապանքները՝ ձուլուած են իրարու անլուծանելի կերպով, որովհետեւ երկու սիրտերը միացած են Սուրբ Հոգիին մէջ՝ վերջնական եւ յաւիտեան տեւելիք զոհին համար, ուստի միեւնոյն չարչարանքն է որ կը տառապեցնէ միանգամայն երկու սրտերը՝ մարդուն փրկութեան համար:

«Խաչին տակ կանգնած Մօր ցաւերուն տեսութիւնը, համառօտեց Որդւոյն կեանքը, այնքան դառն էր այդ աննիւ-

Թական սուրը որ Աստուածորդիին հոգին կը պատառոտէր, աւելի քան իր նիւթական չարչարանքները: «Մա՛յր» գոչեց Փրկիչը այդ վերջին պահերուն ու յանձնեց մեզ ամէնքս՝ իր Մօր գուրգուրանքներուն ու անհուն աղաղակով մը աւանդեց իր հոգին «Հօր» ձեռքերուն մէջ»: Աւա՛ղ ազատութեան պարգեւը ունեցող մարդուն՝ որ խուլ կը գտնուի այս կանչին:

«Ամէն ինչ կատարուած է» (Յով. 19.30): Այո՛, փրկագործութիւնը հասած էր լրումին: Յիսուս խմած էր այս «սիրոյ բաժակէն», լեցուած իր Մօր արցունքներով, Մօր մը որ մեր ալ Մայրը դարձած էր անհուն տառապանքներու բոցին մէջ :

Այս ցաւատանջ ու սիրալիր Աստուածածին Մօր արցունքներու ովկիանոսին վրայ է որ շուտով պիտի ծագի «Ճշմարիտ Արեւը արդարութեան՝ Քրիստոս», լուսաւորելու «Ծագող Արեւու» երկիրը (Ճափոնը), նոր երջանկութիւն մը շնորհելով այդ երկրին:

Այն ատեն պիտի իրականանայ խոստումը «բոլոր ազգերու Տիրամօր» ու Ճափոն պիտի գայ ամբողջապէս դարձի (21-րդ տեսիլ, 14 Փետրուար 1950):

Հ. Ժօզէֆ Մարի Ժազ
Ս. Վէնսանի Միաբանութենէն

ՓՈԽԱՆ ՅԱՌԻԱԶԱԲԱՆԻ

Ագիթայի Տիրամօր արձանին շուրջ պատահածներուն գերբնականութիւնը, յետ պէտք եղած քննութիւններուն, յայտարարուած է Հովուական Նամակով մը ինքնին տեղւոյն Առաջնորդէն՝ Գերպօթ. Յովհաննէս Իթոյ Շոյիրոյէն, Նրիկաթայի Եպիսկոպոսէն Չատիկի տօնին օրը - 22 Ապրիլ 1984-ին:

Եպիսկոպոսը նախ բոլոր պատմութիւնը կ'ընէ մեզի եւ կը պարզէ նաեւ երեւոյթներուն երկնային նկարագիրը:

Աւելորդ կրկնութիւններէ խուսափելու համար, շրջաբերականին միայն մեզ հետաքրքրող անցքերը կու տանք հոս՝ Ֆրանսերէնէն թարգմանելով:

ՀՈՎՈՒԱԿԱՆ ՆԱՄԱԿ
 ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԻԹՈՅ
 ՇՈՅԻՐՈՅԻ
 ՆԻԻԿԱՔԱՅԻ Եպիսկոպոսի
 ԱԳԻԹԱՅԻ ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻՆ ԱՐՁԱՆԻՆ
 ՄԱՍԻՆ
 Ճափոնի մէջ

«Սիրելի հաւատացեալներ իմ Թեմիս, Զատիկի առիթով ընդունեցէք իմ ողջոյններս:

Ահա 22 տարիէ ի վեր Նիիկաթայի Առաջնորդ անուանուած եմ Յովհաննէս ԻԳ. Քահանայապետէն 1962-ին, եւ հասած է տարիքս քաշուելու իմ պաշտօնէս...:

Սակայն մեկնումէս առաջ դիմագրաւելիք մտահոգութիւն մը ունիմ: Ագիթայի «Սուրբ Հաղորդութեան Աղախիններուն» վանքին մէջ պահուած Սուրբ Կոյսին արձանին շուրջ պատահած խորհրդաւոր երեւոյթներն են անոնք:

Գիտեմ որ դուք անոնց մասին լսած էք թերթերէն, ճայնասփիւռէն եւ այլ միջոցներով: Արդէն 1976-ին, երբ ստեղծուեցաւ քննութեան առաջին յանձնախումբը, յայտարարած էի որ պէտք չէ պաշտօնական ուխտագնացութիւններ եւ յատուկ ջերմեռանդական շարժումներ կազմակերպել: Անկէ ի վեր ոչ մէկ ուրիշ յայտարարութիւն կատարած եմ:

Իրականութեան մէջ, առանձնական յայտնութիւններն ալ կարեւոր եղելութիւններ են Եկեղեցւոյ համար եւ պէտք չէ թեթեւօրէն առնել զանոնք: Բայց մինչ կը պատրաստուիմ ձգելու պատասխանատու Եպիսկոպոսի պաշտօնս, իմ պարտքս կատարած չեմ ըլլար եթէ այդ դէպքերու մասին լուռ մնամ, որովհետեւ ես ալ մաս ունեցայ ու միջամուխ վկայ մը եղայ այդ բոլորին: Ուստի որոշեցի պաշտօնական յայտարարութիւն մը կատարել «Հովուական Նամակի» մը միջոցաւ»:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Հոս Իթոյ Եպիսկոպոսը կը ներկայացնէ Ազիթայի Տիրամօր հրաշալիքներուն հետազօտութեան ընթացքը, յայտնելով միաժամանակ թէ ինք անձամբ տեսած է այդ փայտէ արձանին աջ ձեռքի վէրքէն արիւն թափիլը, քրտնիլը, անուշահոտ բուրումներ արձակելը եւ առատ արցունքներ աչքերէն հոսեցնելը, սկսեալ 4 Յունուար 1975-էն մինչեւ «Եօթ վէրքերու Սուրբ Կոյսին» տօնը, որ է 15 Սեպտեմբեր 1981: 101 անգամ լացեր է այդ Յաւազին Մայրը, 4 անգամ Եպիսկոպոսին ներկայութեան: Հագարաւոր մարդիկ ալ տեսած են այդ փայտէ արձանէն մարդկային արցունք բխիլը հեռատեսիլէն:

*Իթոյ Եպիսկոպոսը այստեղ կ'անցի
ցոյց տալու՝*

**ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻՋԱՄՏՈՒԹԵԱՆ
ՆՇԱՆՆԵՐԸ ԱԳԻԹԱՅԻ
ՏԻՐԱՄՕՐ ՄԻՋՈՑՈՎ**

• Ամուսին մը, որու կինը ի գուր երկար տարիներէ ի վեր կը քաջալերէր մկրտուելու, վերջապէս կ'որոշէ դարձի գալ ու կնքուիլ ու քրիստոնեայ դառնալ՝ յետ Տիրամօր արցունքներուն հոսումը տեսնելու:

• Մկրտուած մարդ մը, որ տասնեակ տարիներէ ի վեր բոլորովին լքած էր ամէն կրօնական ապրում, ինքն ալ բոլորովին դարձի կու գայ՝ վկայ գտնուելով Աստուածային Մօր լացին ու մինչեւ իր կեանքին վերջը հաւատարմօրէն կը յաճախէ Եկեղեցի:

• Ուրիշ մարդ մը, յետ այցելելու Ագիթայի Սուրբ Կոյսին սրբավայրը, կ'որոշէ բոլորովին նուիրուիլ առաքելութեան, եւ իր միջոցներով կը ստեղծէ երկու «անապատային ճգնարաններ» իբրեւ աղօթքի ու քրիստոնէական ճշմարտութիւններու ուսուցման կեդրոններ որ դեռ կը շարունակեն իրենց գործունէութիւնը:

• Ունինք նաեւ շատ մը վկայութիւններ եւ հաղորդագրութիւններ քաղցկեղի (cancer-ի) եւ ուրիշ հիւնադուլթիւն-

ներու հրաշագործ բուժումի մասին՝ Ագիթայի Աստուածամօր միջնորդութեամբ:

Յիշենք անոնցմէ երկուքը, ամէնէն աւելի նշանաւորները:

Առաջին պարագան՝ Գորէացի կնոջ մը յանկարծական բուժումն է:

Այս անձը մահաքունի մէջ կ'իյնայ 1981-ի Յուլիսին, ուղեղին մէջ աճող քաղցկեղի պատճառով, որու հետեւանքով՝ միայն բուսական կեանք մը կ'ապրէր այլեւս: Օր մը յանկարծ Ագիթայի Տիրամայրը կ'երեւնայ իրեն՝ ըսելով որ այլեւս պէտք չունի պառկած մնալու եւ թէ շուտով պիտի կարենայ անկողինէն ելլել: Ինչ որ իրապէս կը կատարուի: Ոտքի կ'ելլէ ամբողջապէս առողջացած:

Այս բուժումը իրեն կը շնորհուէր շնորհիւ Գորէացի քահանաներու եւ աշխարհականներու, որ լսած էին հրաշագործ արձանի մասին, եւ դիմած իրեն՝ խնդրելով այդ հրաշքը:

Շողանկարները ցոյց կու տային, նոյնիսկ անոնց որ մասնագէտ չեն, կնոջ կատարեալ բուժումը: Այս շողանկարները առնուած հիւանդութեան ընթացքին ու բուժումէն յետոյ, կ'ընկերանան Սէուլի Ս. Պօղոս համալսարանի՝ բժիշկ Գիմի վկայականով, եւ Գուանճուի (Գորէայի) Արքեպիսկոպոսարանի պաշտօնական դատաւորէն շնորհուած վկայականով:

Այս բոլոր վաւերաթուղթերը դրուած են Հռոմ, Սուրբ Աթոռին: Ես անձամբ հանդիպած եմ կնոջ Սէուլի մէջ եւ նկատած հրաշագործ բուժումը ապացուցանող բնական վիճակը: Ան եկած է նաեւ Ագիթա ուխտի, իր շնորհակալութիւնը յայտնելու Տիրամօր:

Երկրորդ պարագան՝ Քոյր Ագնէս Սասակաուայի խլութեան բուժումն է (որ արդէն տեսանք ու հոս կրկին պիտի խօսինք վրան):

Յամենայն դէպս, այս բոլորը կ'ապացուցանեն գերբնական ծագումը Ագիթայի երեւոյթներուն:

Բայց ինչո՞ւ այս հրաշալի միջամտութիւնները տեղի կ'ունենան: Ինծի կը թուի որ պատճառը պէտք է փնտռել՝ Սուրբ Կոյսին տուած պատգամներուն մէջ, յանձնուած Քոյր Ագնէս Սասակաուայի պէս խուլ անձի մը:

Այս Քոյրը խուլ կը դառնայ երբ կ'աշխատէր Միոքո-Քոպարայի ժողովրդապետութեան մէջ իբր քրիստոնէական վարդապետութեան ուսուցիչ: Խլութեան պատճառով կը մտնէ ճեթսու քաղաքին Ռոգայի կոչուած հիւանդանոցը ուր Բժիշկ Սաւատա կը յայտարարէ զինքը՝ ամբողջապէս խուլ ու անբուժելի: Ուստի հարկ եղած բժշկական թղթածրարը կը պատրաստէ որպէսզի, իբրեւ խեղանդամ անձ, կարենայ կառավարական թոշակ

ստանալ: Քանի որ այլևս չէր կրնար կրօնագիտութեան դաս աւանդել, կը մտնէ «Սուրբ Հաղորդութեան Աղախին»-ներու մայր տունը, կրօնաւորելու եւ նուիրուելու ամբողջապէս աղօթքի կեանքի:

Այս խուլ վիճակին մէջ կը գտնուէր՝ երբ Տիրամայրը իր առաջին պատգամը տուաւ 6 Յունիս 1973-ի առաջին ուրբաթի առաւօտը (ինչպէս արդէն տեսանք) եւ ձայնը կու գար մատրան մէջ յարգուած փայտէ արձանէ մը որ արեւու նման շլացնող ճառագայթներով կը շողար:

Երկրորդ պատգամը տուաւ առաջինին պէս, յաջորդ 3 Օգոստոսին, որ ուրբաթ էր, նոյն փայտէ արձանէն բխող քաղցր ձայնով մը:

Երրորդ եւ վերջին պատգամն ալ տուաւ նոյն կերպով, նոյն տարուան ընթացքին, 13 Հոկտեմբերին:

Վերջին պատգամը, կ'ըսէ Իթոյ Սրբազանը, իրապէս շատ ծանր սպառնալիքներ կը պարունակէ, բայց նկատելու է որ անոնք պայմանական են, այսինքն «եթէ մարդիկ դարձի չգան»: Այս պատուհասները նման են Ֆաթիմայի եւ Մետիւրկորիէի սպառնալիքներուն:

Պատգամներուն մէջ կը զգանք Սուրբ Կոյսին մայրական անսահման սէրը որ կու լայ կորուստի ճամբան բռնողներուն վրայ եւ կը յորդորէ դարձի. «Իմ խոր ցաւիս պատճառը՝ հոգիներու կո-

րուստն է», կ'ըսէ ան՝ թէ՛ խօսքով, թէ՛ քրտինքով, թէ՛ անվերջ արցունքներով եւ վէրքերէն թափող արիւնով:

«Ինչպէս որ Սուրբ Կոյսը խոստացած էր, Մայիս ամսուան վերջին Կիրակին, Հոգեգալստեան տօնին, (30.05.1982), յետմիջօրէին, Սուրբ Հաղորդութեամբ ծիսական օրհնութեան պահուն, Քոյր Ազնէս Սասակառւա վայրկենապէս կը բուժուի:

14 Յունիսին անձամբ գացի տեսնելու բժիշկը (անունը Արայի), որ քիթիկոկորդի մանագէտն էր՝ Ագիթայի Կարմիր Խաչ հիւանդանոցին մէջ պաշտօնավարող: Ինքն էր որ ինը տարի առաջ քննած էր ու յայտարարած գայն՝ անբուժելի, եւ հիմա գտնելով գինքը ամբողջապէս բուժուած, մնացած էր ապշած: Նմանապէս գարմանքի մէջ էր Սաուատա բժշկա-

⁵ Կրկին նկատի առնել կու տանք թէ կը թուի որ մարդկութիւնը խուսափած է աշխարհի կործանարար պատուհասներէն եւ միւսները թեթեւցած, ըստ Փատրէ Լիվիոյ Ֆանցակայի, շնորհիւ Տիրամօր բարեխօսութեան եւ բարի հոգիներու ապաշխարութեան:

Իթոյ Նպիսկոպոսը իր շրջաբերական նամակին մէջ կրկին կը դառնայ Տիրամօր երրորդ պատգամին ու կը շեշտէ Քոյր Ազնէսի բուժման հրաշքին վրայ իբրև կարևորագոյն ապացոյց երկինքի միջամտութեան Ագիթայի Տիրամօր արձանին շուրջ պատահածներուն: Մենք աւելորդ տեղ չերկարելու համար, կը փակենք իր գրութեան վերջին երկու էջերու թարգմանութեամբ որ, միաժամանակ, պաշտօնական յայտարարութիւն մըն է տեղական Նեղեցոյ:

պետը ժեթսուի հիւանդանոցին, որ 3 Յունիսին տուած էր վկայականը այս անբացատրելի բուժումին:

«Տաս տարիէ ի վեր կը ճանչնամ Քոյր Սասակաուան: Բնականոն երիտասարդ կին մըն է անկեղծ ու լայնախոհ նկարագրով օժտուած, զերծ որեւէ հիւանդագին ախտանշանէ: Հետեւաբար կարելի չէ մտածել որ պատգամները արդիւնք ըլլան իր երեւակայութեան կամ բանդագուշանքին: Անոնց պարունակութիւնը ամենեւին հակառակ չէ որեւէ քրիստոնէական ուսուցման, եւ ներկայ աշխարհի կացութիւնը, զանազան կողմերէ դիտուած, կը յիշեցնէ Աստուծամօր տուած ծանր ազդարարութիւններուն այժմէականութիւնը:

«Ասոնք են իմ փորձառութեանս տուեալները եւ համոզումս այն երեւոյթներուն նկատմամբ որ Ագիթայի Սուրբ Կոյսին արձանին շուրջ պատահեցան վերջերս:

Իբրեւ Առաջնորդ Եպիսկոպոս թեմին, ինծի կ'իյնար պարտականութիւնը քննելու մանրանմասնօրէն բոլոր պարագաները եւ դատաստան մը բանաձեւելու, տալով միանգամայն հովուական ուղղութիւն մը, եւ քրիստոնեայ աշխարհականներուն ինծի ուղղած անձկագին հարցումներուն՝ գոհացուցիչ լուսաբանութիւն մը ընծայելու: Այս շատ փափուկ հարցերուն մասին Հռոմի «Հաւատքի

Սուրբ Ժողովն» ալ նոյն ուղղութեամբ կ'աշխատի: Ասկէ զատ իմ կողմէս կրնամ ըսել որ ես լաւ կը ճանչնամ «Սուրբ Հաղորդութեան Աղախիններու» միաբանութիւնը եւ իր անդամները հիմնարկութեան օրէն սկսեալ:

«Սուրբ Կոյսին յայտնութիւններու պատմութիւնը ցոյց կու տայ եւ Եկեղեցւոյ օրէնքներն ալ կը պահանջեն, որ միշտ Եպիսկոպոսն է որ ամէնէն առաջ պաշտօնական արտօնութիւնը պէտք է տայ իր թեմին մէջ երեւցող Տիրամօր ջերմեռանդութիւնը վաւերացնելու եւ մշակելու: Ուստի յետ յատուկ աղօթքներու եւ շատ երկար խորհրդածութիւններու, իբրեւ Եպիսկոպոս Նիիկայի թեմին, հետեւեալ յայտարարութիւնը կը կատարեմ:

«Մինչեւ այսօր կատարուած հետազօտութիւնները մեզի չեն արտօներ մերժելու գերբնական նկարագիրը Սուրբ Կոյսին արձանին վերագրուած խորհրդաւոր դէպքերու շարքին, որ տեղի ունեցած է «Սուրբ Հաղորդութեան Աղախիններու» հաստատութեան մէջ, Իւզաուատայի հիւղակին յարկին տակ, Ագիթաքաղաքին մերձաւոր Սէկաուա գիւղին մէջ:

Բացի ասկէ, անոնց մէջ կարելի չէ ոչ մէկ բան գտնել որ հակառակ ըլլայ Հաւատքի եւ Բարոյականի: Հետեւաբար, մինչեւ որ Հռոմի Սուրբ Աթոռին վերջ-

նական դատաստանը յայտարարուի, իմ թեմիս մէջ չեմ արգիլեր Ագիթայի Սուրբ Կոյսին ջերմեռանդութիւնը:

Ասկէ գատ, նոյնիսկ այդ պարագային որ Սուրբ Աթոռը նպաստաւոր վճիռ մը տայ անոնց, կը մնան միշտ անհատական յայտնութիւններ եւ ստիպուած չենք հաւատալու, (ինչպէս կը հաւատանք քրիստոնէական կրօնքի ճշմարտութիւններուն):

Պարտական ենք հաւատալու միայն աստուածային յայտնութեան, (որ վերջ գտած ու փակուած է վերջին Առաքելին մահով), որ կը պարունակէ բոլոր յայտնութիւնները որ հարկաւոր են փրկութեան:

Սակայն Եկեղեցին կարեւորութիւն կու տայ նաեւ անհատական յայտնութիւններուն, որովհետեւ անոնք կրնան օգնել հասնելու բուն հաւատքի ճշմարտութիւններուն: Ասոր նկատմամբ հոս երկու հատուածներ կը մէջբերեմ «Կաթողիկէ Եկեղեցոյ» պաշտօնական վարդապետութիւնը ներկայացնող գիրքէն:

«Քանի որ սուրբերը եւ հրեշտակերը արժանացած են շնորհքի եւ փառքի Աստուծոյ սուրբ կամքը կատարած ըլլալնուն համար, արդար է որ զիրենք յարգենք, որովհետեւ այդ ալ կերպ մըն է գովասանք ու շնորհակալութիւն բարձրացնելու ինքնին Աստուծոյ:

Սուրբերու միջեւ, Սուրբ Կոյս Մարիամին, բոլորովին յատուկ յարգանք մը կը մատուցուի, որովհետեւ Մայրն է Փրկչին որ Աստուած է, միանգամայն մայրն է բոլորիս:

Աստուածամայրը բոլոր սուրբերէն ու հրեշտակներէն վեր դասուած է: Ուստի լի աստուածային շնորհքներով, իբրեւ ճշմարիտ մայր մը, մեզի համար անդադար կը բարեխօսէ»: (Doctrine catholique – édition revue p. 72)

«Քրիստոսի եւ Սուրբերու արձաններն ու պատկերները նպատակ ունին օգնելու եւ զօրացնելու մեր հաւատքը եւ ջերմեռանդութիւնը, մղելով մեզ Քրիստոսը եւ Սուրբերը պատուելու պատշաճապէս»: (Doctrine catholique – ancienne édition p. 170).

Փակելու համար այս հովուական նամակս, ամէնուղ կը յղեմ իմ առաքելական օրհնութիւններս, խնդրելով որ Աստուծոյ շնորհքը իջնէ ձեր վրայ առատօրէն:

Յովհաննէս Իթոյ Շոյիրոյ
Նիիկաթայի Եպիսկոպոս



Ա. Ղազար
9 Դեկտեմբեր 2012,
ի տօնի Անարատ Յղութեան Տիրամօր